

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ



ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

---

**ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ**

**ԵՐԵՎԱՆ 2003**

ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ  
ИМЕНИ КОМИТАСА

**СБОРНИК  
МУЗЫКОВЕДЧЕСКИХ ТРУДОВ**

**II**

Издательство "КОМИТАС"  
ЕРЕВАН 2003

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

II

«ԿՈՄԻՏԱՍ» հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 78

ԳՄԴ 85.31

Ե 762

Պատասխանատու խմբագիր՝ Ն.ԱՎԵՏԻՍՅԱՆ  
Խմբագիրներ՝ Ա.ԱՆԱՆՅԱՆ, Ժ.ՋՈՒՐԱԲՅԱՆ  
Գրախոսներ՝ Ա.ԲՈՒԴԱԴՅԱՆ, Ա.ՇԱՄՇՅԱՆ,  
Կ.ՋԱՂԱՅՊԱՆՅԱՆ, Ա.ՍԱՐՅԱՆ

Ответственный редактор: Н.АВETИСЯН  
Редакторы: А.АНАНЯН, Ж.ЗУРАБЯН  
Рецензенты: А.БУДАГЯН, К.ДЖАГАЦПАНЯН,  
А.САРБЯН, А.ШАМШЯН

Ե 762

Երաժշտագիտական աշխատությունների ժողովածու. - Գիրք Բ. - Եր.: Կոմիտաս, 2003. - 232 էջ:

Երաժշտագիտական հոդվածների ներկայացվող ժողովածուն ընդգրկում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսորների և դասախոսների ուսումնասիրությունները երաժշտության պատմության, տեսության և կատարողական արվեստի բնագավառներում: Տեղ է հատկացված կոնսերվատորիայի սկզբնավորման և զարգացման հարցերին, հայ և համաշխարհային երաժշտության արդի խնդիրներին:

Գիրքը հասցեագրված է մասնագետ երաժիշտներին, կոնսերվատորիաների և երաժշտական ուսումնարանների ուսանողներին, ինչպես և պատրաստված երաժշտասերներին:

В публикуемом сборнике музыковедческих трудов профессоров и преподавателей госконсерватории имени Комитаса представлены научные исследования в области исторического, теоретического музыкознания и музыкального исполнительства. В статьях освещены вопросы становления и развития консерватории, творческого наследия Комитаса, изучения армянского национального искусства в контексте мирового музыкального процесса.

Книга адресована профессиональным музыкантам, студентам консерваторий и музучилищ, а также подготовленным любителям музыки.

Ե 4905000000 2003  
0036(01)2003

ԳՄԴ 85.31

ISBN 99930-979-0-X

© Երևանի Կոմիտասի անվան պետկոնսերվատորիա  
© Ереванская госконсерватория им.Комитаса

**ԱՐՇԱՎԻՐ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԻՄ ԵՐԳՉԱԿԱՆ ՈՒ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՉԻՑ**

Երգեցողության՝ ամենագեղեցիկ գործիքով կերտվող արվեստի մասին գրույցը միշտ էլ ցանկալի է և ունի վիճելի շատ կողմեր:

Շատերը կարծում են, որ դա բարդ ու մութ գործ է, սակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Պարզապես՝ մի երգչին շուտ է հաջողվում, մյուսին՝ ուշ, իսկ ում չի հաջողվում՝ նա որոնում է և բարդացնում:

Երգ պլյուս արվեստը ոչ այնքան գիտություն է, որքան գիտակցված բնագր և կառուցված է զգացումների ճիշտ օգտագործման վրա:

Դասատուներ կան, որ հնչարտաբերման ընթացքը տեսականորեն հիմնավորում են, բայց գործնականում նրանց տեսությունը հաճախ ձախողվում է:

Վոկալ արվեստի մեջ կան որոշ առանձնահատուկ հասկացություններ, օրինակ՝ «տեսնող ականջներ»: Մանկավարժը, կարծես, տեսնում է հնչարտաբերման ողջ ընթացքը, բայց նա պետք է կարողանա նաև զգացածը ճիշտ հաղորդել ուսանողին, հաղորդել նրա բնությունից ելնելով, որը ոչ այլ ինչ է քան «անհատական մոտեցում»:

Հաճախ ուսանողին թվում է, թե իր ձայնը հնչում է, և ամեն ինչ լավ է, սակայն դա խաբուսիկ է: Ի՞նչ է տեղի ունենում: Չայնը ետ է գնում՝ լսելի դառնալով երգողի ականջներին, բայց ոչ լսողներին:

Անչափ կարևոր է նաև աշակերտի և դասատուի կոնտակտը: Վերջիմում պակաս դեր չի խաղում նրանց զգացողության համատեղելիությունը:

Որքանո՞վ են նրանց զգացածն ու պատկերացրածը նման: Մանկավարժը պետք է զգույշ լինի արտահայտվելիս: Պետք է խոսի հնարավորին չափ պարզ, դյուրըմբռնելի: Հակառակ պարագայում կարող է շեղել իր սանի ուշադրությունը բոլորովին այլ ուղղությամբ:

Իմ վոկալ մտածողության հիմքը Թամար Շահնագարյանի դպրոցն է, և մինչ օրս էլ դժվարանալիս անմիջապես հիշում եմ ուսուցչուհուս. ի՞նչ կասեր նա այս պահին, ի՞նչ կառաջարկեր:

Հնչարտաբերման ընթացքը ամբողջովին կազմված է հակասություն-

ներից: Պասիվ երգեցողությունն անվերապահորեն ընդունելի չէ, միաժամանակ ամենակտիվ երգեցողությունն էլ պիտի զերծ լինի ավելորդ ճիչից (Ֆորսից): Չայնի գունեղությունը նույնիսկ ամենաբարձր ռեզիստում անկարելի է առանց կրծքային արձագանքի: Գլխայինի և կրծքայինի կողողիմացիայի աննշան խախտումն իսկ բերում է հնչողության տեմբրային և դինամիկ կորստի: Գլխայինը քաշում է վերև, կրծքայինը՝ ցած. խնդիրը սրանք հավասարակշռելն է, և սա խոսքերով բացատրելի չէ, սա «տեսնելու» (երևակայելու) բան է: Ամեն ինչ պետք է կատարվի ինչպես հաղորդակցվող անոթներում. համաչափ, սահուն, առանց ծավալի և որակի կորստի:

Մասնավորապես՝ ցած և փափկահնչուն ձայներին, որոնք ձևավորվում են ավելի խորքից, անհրաժեշտ է ստիպել առաջ բերել ձայնը, հակառակ պարագայում՝ կկորչի, կխլանա:

Գյոթեի խոսքերով ասած՝ «Երգչի հանճարն ակնթարթային է»: Երգը վաճճն արդեն շտկել հնարավոր չէ: Երգը պահանջում է արագ անսխալ կողմնորոշում, որի հիմքը դարձյալ գիտակցված զգացողությունն է: Ոչինչ տարերայնորեն չի կարող լինել:

Քանի որ խոսքը կրծքային երգեցողության մասին է, կուզեի հատուկ անդրադառնալ այդ ընթացքին:

Անկախ ռեզիստից՝ բարձր թե ցածր, կրծքային հնչողության բալանսը պետք է պահպանվի: Սա է, որ ազնվացնում է ձայնը: Կան նույնիսկ նշանավոր երգիչներ, որոնց վերին ռեզիստում կրծքային հնչողությունը տեղի է տալիս, երբեմն էլ՝ դավաճանում ընդհանրապես գլխայինի խիստ գերակշռության պատճառով: Ակամա հիշեցի իտալացի մի լրագրողի, որը խնդրեց ինձ լսել իտալերենից ռուսերեն իր կատարած թարգմանության ձայնագրությունը և անչափ վրդովվեց, ասելով, որ արտաբերածի մեջ կրծքային երանգը խիստ պակաս է: Սա լրագրող էր, դե հիմա պատկերացրեք, թե երգիչն ինչպես կվարվեր: Վերին հնչյունները խիստ գլխային ձայնով երգողներին լսելիս մտաբերում են արևելյան մանգներին, որոնց համար, թվում է թե, դեպի վեր արգելք գոյություն չունի, բայց ձայնը փաստորեն դատարկ է:

Կրծքային լիարժեք երգեցողության անկրկնելի օրինակ է Էնրիկո Կարուզոյի արվեստը: Այս առումով նա գերազանցել է աշխարհի բոլոր տեղորոներին և, անկախ նրա արտակարգ ձայնից, միայն կրծքայինով էլ բարձր է բոլորից. կուրծք, բայց բարձր պոզիցիայի առկայության պայմանով: Եվ պատահական չէ իտալացիների «գլուխ-կուրծք, կուրծք-գլուխ» արտահայտությունը:

Մեկ ուրիշ բան: Առանց կրծքի երգելը կարծես թե հեշտանում է, և անփորձ երգիչները հաճախ խաբվում են այդ հեշտությունից, անաեսելով հետագայում որակագրկվելու վտանգը:

Շատ ավելի հեշտ է հաղորդակցվել բոլորովին անփորձ (ոչ մի դպրոց չանցած) սանի հետ: Ինչ խոսք, չեմ բացառում մահ մախտորդ և ներկա դասատուների դպրոցների ընդհանրությունը, որը, ցավոք, հազվադեպ է լինում:

Գաղտնիք չէ, որ երգվում են միայն ձայնավոր տառերը: Չնայած այդ ձայնավորների տարբեր ֆոնետիկային, հնչարտաբերման ընթացքում կոկորդի և բերանի դիրքը չպետք է փոխվի: Դասատուն պետք է այստեղ անչափ զգոն լինի, որպեսզի տեմբրային և դինամիկ ոչ մի արտահոսք չկատարվի, որպեսզի ամեն ինչ գնա կարգավորված հունով և կարծր քիմքի ռեզոնատորներին զարնվի ոչ թե տարերայնորեն, այլ գիտակցաբար՝ վերին պոզիցիան անցնելով: Լավ է, երբ դասատուն կարող է հավուր պատշաճի երգել և երգելով հասկացնել ուսանողին անհրաժեշտը: Ըստ Կարուզոյի՝ լավագույն դպրոցը մահ մեծ երգիչներին լսելն է, լսելը, բայց ոչ կուրորեն ընդօրինակելը. ամեն անհատ պարտավոր է լսածից վերցնել միայն իրեն հարագատը:

Այսպես, դեռ ուսումնառության տարիներին, ես հաճախ լսում էի ամերիկացի նշանավոր բարիտոն Լեոնարդ Ուորրենի ձայնագրությունները, որոնք մեծ դեր խաղացին իմ վոկալ մտածողության կազմավորման գործում: Շատ բան պայմանավորվում էր մեր ձայների տեմբրերի մնանությամբ: Դա թույլ էր տալիս առանց մտավախության հետևելու իմ «կուրքին»: Բայց, ասեմք, Կարուզոյին կամ Բուֆֆոյին ընդօրինակել ցանկացող երգիչները միշտ էլ կործանվել են, որովհետև նրանց ընդօրինակելու համար անհրաժեշտ է ունենալ՝ նրանց իսկ տվյալները, իսկ Կարուզոն և Բուֆֆոն բնության անկրկնելի հրաշքներ են:

Ուսանողի հետ պարապելիս դասատուն պետք է հիմք ընդունի նրա միջին ռեգիստրի հնչողությունը: Ավելին՝ յուրաքանչյուր ձայն ունի առնչված մեկ հնչյուն, որը բնականից դրված է: Անհրաժեշտ է մախ ճշգրտորեն զանազանել այդ հնչյունը՝ աշակերտի բնությունը, և դյամից վեր ու վար գտնվող հնչյունները հավասարեցնել այդ մեկին:

Միջին ռեգիստրի վրա աշխատանքը պետք է կատարվի այնքան համբերատար, մինչև որ վեր կամ վար զնալու անհրաժեշտությունն ինքնաբերաբար հասունանա: Միջին ռեգիստրի հնչողությունն ավելի հստակեցնելու համար երբեմն (խիստ անհատականորեն) կարելի է դիմել մահ փոքր-ինչ ուժեղացված հնչարտաբերման, երգիչների լեզվով ասած՝ ֆորսի, և երբ հասնես հավասար հնչողության, անհրաժեշտ է արդեն մտածել

երգը փափկացնելու մասին:

Լինում են առանձին դեպքեր, երբ ուսանողն ամեն ինչ ընկալում է միանգամից: Այստեղ անհրաժեշտություն չկա հետևելու վաղօրոք մշակած սխեմային, առավել ևս՝ դիպչելու երիտասարդի անհատականությանը:

Ամեն մի շինություն պետք է հեմարան ունենա: Երգեցողության մեջ դա շնչառությունն է:

Տարբեր երգիչներ շնչառությունը տարբեր են մեկնաբանում, մինչդեռ այստեղ նույնիսկ երկու կարծիք լինել չի կարող: Եվ սա ոչ միայն իմ համոզմունքն է: Շուրջ 30 տարվա երգչական կարիերայիս ընթացքում ես հանդիպել եմ նշանավոր շատ երգիչների հետ, ինչպիսիք են Տիյտ Կուուրիկը, Ժան Պիրսը, Կարպիս Ջոբյանը, Ջենահյա Պալլին, և վերջապես՝ ասածիս համակարծիք են եղել սիրելի ուսուցչուհիս՝ պրոֆեսոր Թ.Շահնազարյանը և իտալացի Ջորջո Ֆավորետտոն, որի դասաբանում կատարելագործվել են:

Ի՞նչ է շնչառությունը:

Երգի հետ կապ չունեցող մարդիկ սովորաբար շնչում են կրծքավանդակով, մինչդեռ երգչի շնչառությունը պետք է ավելի խորը հիմք ունենա: Հենց այդ խորը հիմքի շնորհիվ է, որ ձայնն ավելի ծավալուն է դառնում, մեծանում է հնչյունների ընդգրկման դիապազոնը և ապահովվում ձայնի անկաշկանդ միատարր հոսքը: Շունչն ամբարվում է ստոծանու մեջ և այնտեղ պահպանվում մկանների շնորհիվ, և որքան ճիշտ մարզված, ամուր և ճկուն են այդ մկանները, այնքան ավելի առաձգական է դառնում ձայնը: Հնչարտաբերման օդասյան սկզբնաղբյուրը ստոծանում ամուր ամբարված օդն է:

Շնչառության կազմավորման ընթացքն ակնթարթային է: Շունչն արագ և (ցանկալի է) առանց ճիգի պետք է լցնի ստոծանին և մկանների շնորհիվ հեմվի վերջինիս պատերին: Բայց սա դեռ սկիզբն է: Մրան հաջորդում է մեկ ուրիշ և ոչ պակաս կարևոր հանգամանք՝ հավաքված օդի ճիշտ օգտագործումը: Ո՞րն է այդ ճիշտը: Երգիչը պետք է կարողանա բնականորեն ապահովել ստոծանու և բարձր պոզիցիայի կապը, չանտեսելով կրծքային ռեզոնատորների անչափ կարևոր մասնակցությունը, այլ կերպ հնչարտաբերումը կլինի մակերեսային: Ստոծանու, կրծքի և վերին՝ գլխային ռեզոնատորների ամուր կապն ապահովվում է շունչ առնելուն հաջորդող ակնթարթային մի դադարով, որից հետո ձայնական ապարատի բոլոր բաղադրամասերը գալիս են փոխապայմանավորվածության, և հիմա հիմնական մտահոգությունը պետք է լինի այդ կապը չխախտելը:

Քթո՞վ շունչ առնել, քե՞ քերանով... Ոմանց համար սա հանելուկ է:

Փորձիցս ելնելով՝ այն կարծիքին եմ, որ անպայման բերանով: Մի կողմ դնենք իմ կարծիքը, իսկ եթե վատառողջ ես՝ քիթդ հարբուխի պատճառով փակ է, ներկայացումը կամ համերգն էլ՝ տապալման վտանգի տակ, ուրեմն ի՞նչ, չպե՞տք է երգես... Բացի այդ՝ բերանով լիարժեք շունչ առնելն ավելի հեշտ է:

Այս բոլորը տեսականորեն ճիշտ է, բայց եթե հնարավոր լիներ գիրք կարդալով երգել սովորել, ապա վոկալ արվեստի առջև այսքան խնդիրներ չէին ծառանա. «կարդացիր ու երգեցիր...» Այստեղ է, որ ուսանողին օգնության են հասնում դասատուի «տեսնող ականջները», իսկ եթե այդ «տեսնող ականջներից» սանն էլ ունի, ապա մանկավարժի համար ավելի մեծ երջանկություն լինել չի կարող. լսել և պատկերացնել, թե ինչ է կատարվում երգողի ներսում, որքանով է այդ ընթացքը հարազատ նրա բնությանը:

Կան ուսանողներ, որոնք գիտուն են, զարգացած, անչափ երաժշտական, լավը վատից տարբերում են, բայց հենց գործը հասնում է հնչարտաբերմանը, ապա դեմ են առնում գուցե հենց իրենց էրուդիցիայով ստեղծած դժվարին մի պատմեշի:

Շարունակեմ միտքս. հռչակավոր Պաբլո Կազալսին նվիրված մի շատ ուսուցողական վավերագրական կինոնկար եմ տեսել: Նստած էր վարպետը, դիմացն՝ աշակերտը: Երկուսն էլ գործիքով: Վարպետը տակտ առ տակտ նվագում էր, աշակերտը՝ կրկնում, կրկնում յուրովի, և եթե կրկնմանը քիչ թե շատ նմանվում էր մատետրոյի նվագածին՝ ապա դա արդեն նվաճում էր: Ի՞նչ եմ ուզում ասել: Շատ կարևոր է, երբ դասատուն ինքը գտնվում է կատարողական հստակ մարզավիճակում: Նման դեպքում երգածն ավելի շատ բան կարող է տալ, քան խոսքերով ասածը: Աշակերտն ընդօրինակելով գտնում է իրենը: Իհարկե, նա կուրորեն չպետք է ընդօրինակի, այլ լսածը պետք է անցկացնի իր բնության միջով:

Դասատուներ էլ կան, որոնք, ասենք, տարիքից ելնելով, արդեն չեն կարողանում երգել: Այստեղ արդեն օգնության պիտի հասնի մախիկն երգածով ամրապնդված փորձը: Նման դասատուները պետք է ապավինեն իրենց ականջներին, և նրանց ուշադրությունից անբնական ոչ մի հնչյուն չպետք է վրիպի: Չե՞ որ ձայն մշակել նշանակում է գտնել այդ ձայնի բնական վիճակը:

Չպետք է անտեսել, որ յուրաքանչյուր ուսանող անհատ է, և անհատականությունն առաջին հերթին պայմանավորված է նրա ազգային բնութագրով՝ լեզվամտածողությամբ, երաժշտական մախնական ընդգրկման ոլորտով: Լավ է, եթե մախքան սովորելը նա, ասենք, ժողովրդական գողորիկ երգեր է երգել, քանի որ դրանք պահել են նրան բնական

կանտիլենայի վիճակում: Խելացի մանկավարժը կարողանում է բռնել այդ թելն ու զարգացնել, ավելին՝ դրանով ստեղծում է մի հիմք, որը հնարավորություն է տալիս տանել ուսանողի փոկալ-երաժշտական զարգացումը անհրաժեշտ ուղղությամբ:

Անձամբ ես որպես վարժություն հաճախ օգտագործում եմ ժողովրդրդական երգերի պատառիկներ կամ հասվածներ կոմիտասյան երգերից: Երբ ձայնն արդեն մտնում է որոշակի հունի մեջ, առաջադրում եմ նաև առանձին նախադասություններ օպերային արիաներից: Ջգալով, որ սաճն տեխնիկական որոշակի հմտություն է ձեռք բերել, սկսում եմ արդեն խոսել երաժշտական ֆրազի և փոկալ կերպարի մասին: Առաջինը փոկալ գիտակցված բնագրից անջատ մի բան չէ: Առանց մեկի մյուսը գոյություն չունի, և ասածս դեռ չի նշանակում, որ սկզբնական շրջանում ես ֆրազն անտեսել եմ:

Ֆրազավորման մեջ կան ընդունված դրույթներ, որոնք, ինչ խոսք, պարտադիր են, օրինակ՝ ֆրազի դիմամիկան և նրա տրամաբանական ամբողջացումը, և սա ուսանողը պետք է յուրացնի հենց սկզբից: Բայց գալիս է մի շրջան, երբ կոշտ շրջանակների մեջ դնելը կարող է դիպչել նրա անհատականությանը, և այստեղ պետք է ողջունել սաճի կողմից ցուցաբերած առողջ, հետաքրքրական ամեն մի նախաձեռնություն:

Բոլոր դեպքերում՝ դիմացինն ուսանող է, և ես պարտավոր եմ տալ նրան կատարվելիք գործի մեկնաբանման ընդհանուր սխեման: Մեծ մասամբ երգում եմ սկզբից մինչև վերջ և ապա բացատրում երգի իմաստը: Եվ երբ համոզվում եմ, որ երգածս ու ասածս տեղ են հասել, նոր դիմում եմ ուսանողի երևակայությանը:

Ստեղծագործությունների ոճերի և ժամանակաշրջանների տարբերության ընկալումը նույնպես համառ ու հետևողական աշխատանքի արդյունք է: Վոկալ-մանկավարժական երկացանկը հենց այդ նպատակն է հետապնդում: Կան փոկալիզմների, երգերի և ռոմանսների, հնագույն կոմպոզիտորների գործերի հաջորդաբար մշակված ժողովածուներ, որոնք, իհարկե, հեշտացնում են մանկավարժներիս գործը, բայց այդ ժողովածուների գերին չպետք է դառնալ: Հնուտ դասատուն, ուսանողի ծրագիրը կազմելիս, պետք է միշտ ելնի նրա հնարավորություններից և նախասիրություններից: Այսպես՝ գյուղից եկած և գեղջկական երգերին սովոր երիտասարդին, կարծում եմ, չի կարելի միանգամից ստիպել Սկարլատի երգել: Սկարլատին նրանում պետք է աստիճանաբար հասունանա, ասենք, մեկ տարում, գուցե և ավել ժամանակահատվածում: Աստիճանական զարգացումն իր հերթին պետք է բերի այնպիսի մի որակ, երբ ձայնին

հպատակ են բոլոր հիմնական նրբերանգները՝ piano, forte, mezzo forte: Ասենք նաև, որ սրանց բնականությունն անհնարին է առանց վոկալ արվեստի համար պարտադիր mezzavoce-ի, այն հստակ կիսաձայնի, որն իբրև հիմք կառավարում է դինամիկ բոլոր անցումները:

Mezzavoce ձեռքբերելու համար հաճախ ուսումնառության շրջանն էլ չի բավարարում, իսկ եթե, ասենք, բարձր կուրսի ուսանողն այդ բարենասնությունն արդեն ունի, ապա նրան կարելի է կամերային երգեցողության հարթակ տրամադրել, առանձին դեպքերում՝ նույնիսկ մենահամերգի:

Չեմ կարող համաձայնել այն, ցավոք տարածված, կարծիքին, թե թերհաս ձայնը պետք է հանդես գա կամերային կատարումով, և ընդհակառակը՝ տեխնիկապես ամուր երգիչն է, որ պիտի օպերային բեմ դուրս գա: Միանգամից ասեմ, որ ձայնին տիրապետելու բարձր արվեստը, որի մեջ մտնում է նաև հմուտ նյութանավորումը, կամերային երգեցողության մեջ ավելի կարևոր է: Ավելի բան օպերային բեմում այստեղ անհրաժեշտ է գեղեցիկ երանգներով հարուստ միատարր հնչող ձայն: Եթե օպերային բեմում ձայնի անկատարությունը կարելի է քողարկել խաղով, զգեստով, դեկորներով կամ գույնզգույն լուսարձակներով, ապա կամերային երգիչը, ինչպես ասում են՝ «մորե մերկ է» և ձայնից բացի ուրիշ արտահայտչամիջոց չունի: Եվ առանց երգչական հարուստ կոմպլեքսի չի կարելի մենահամերգ տալ. դա կնշանակի պատժել ոչ մի մեղք չգործած ունկնդրին, երկու բաժին ստիպել նրան դժգույն երգեցողություն լսել:

Ասածս չի նշանակում, որ օպերային երգչի համար նույն բարենասնությունները պարտադիր չեն: Օպերային բեմը միայն կշահի, եթե հզոր ձայնով մենակատարը կամերային երգչի չափ նրբազգաց երաժիշտ լինի և իր կամերայնությունը կարողանա ծառայեցնել բեմական կերպարի արտահայտման ավելի լիարժեք բացահայտմանը:

Օպերային երգիչն, ի վերջո, միշտ էլ կարող է հանդես գալ կամերային ծրագրով, և օպերայից «բերված» հզորությունը ավելի տպավորիչ կդարձնի, ասենք, Շուբերտի «Նմանակի» կամ «Անտառի արքայի» պես գործերի մեկնությունը: Այսինքն՝ օպերային և կամերային երգիչներն այստեղ մեկը մյուսին լրացնում են:

Օպերան բարդ համադրական արվեստ է, և այս առումով օպերային երգչին ներկայացվող պահանջներն ավելի շատ են ու բազմակողմանի: Միշտ չէ, որ դերասանական շնորհք ունեցողը լավ երգիչ է և հակառակը՝ լավ երգիչը՝ դերասան: Այս երկուսի միակցությունն այն երանելին է, որին ասում են լիարժեք կոլտուրա: Դժվար է պատկերացնել այնպիսի մի օպերա, ինչպիսին է «Կարմենը», առանց ավանդականից բարդ անսամբլմե-

րի, որոնք պահանջում են ակնթարթային ռեակցիա, ռիթմի և դինամիկ բալանսի նուրբ զգացողություն: Երաժշտականությունը գումարվում է հենց այս գործոններից: Վերցնենք «Եվզենի Օնեգինի» կվարտետը: Որևէ օղակի՝ սուպրանոյի, ալտի, տենորի կամ բարիտոնի անկատարությունն այստեղ բերում է ինտոնացիոն կեղծիքի, որն առաջին հերթին ծանրանում է Օնեգինի դերակատարի ուսերին, որովհետև նա կվարտետի հիմքն է:

Կան ավանդականորեն ավելի երգային օպերաներ, դերերգերի քնարական երգաբաժիններով, որոնք դաստիարակչական առումով շատ նպաստավոր են: Իմ կյանքում նման դեր խաղալ Ժերմոնի դերերգը Վերդիի «Տրավիատայում»: Այս դերերգով ես գտա կրթացողության այն երջանիկ վիճակը, որը նույնիսկ ֆիզիկական հաճույք է պատճառում: Մեներգերում և անսամբլներում ականա հարեցի ասածս belcanto-ին, և երգային այդ վիճակը աշխատում են տեղափոխել մյուս դերերգերի մեջ:

Վերոհիշյալը սակայն չի նշանակում, թե Ժերմոն երգելն ավելի հեշտ է, քան, ասենք, «Ռիզոլետոն»: Ավելին, եթե Ռիզոլետոյի դերերգում վոկալ թերությունը կարելի է ծածկել դերասանական խաղով կամ դինամիկ էֆեկտներով, ապա Ժերմոնի դերակատարը բացի ազնիվ belcanto-ից ուրիշ հեմարան չունի: Երգչին այստեղ կփրկի միայն փափուկ՝ քնարական, կապակցված երգեցողությունը, որին նա պետք է լավ նախապատրաստված լինի քնարական ավելի դյուրին դերերգերի կատարումով և, կարծում եմ, որ շատ կարևոր է՝ կամերային ելույթներով:

Որքանով է այս ամենին պատրաստ երեկվա ուսանողը: Ենթադրենք, դասարանում ամեն ինչ հիմնականում հաղթահարված է: Երիտասարդ երգիչը դուրս է գալիս օպերային բեմ և երգում առաջին ֆրագը: Տանրածությունը մի քանի անգամ ավելի մեծ է, քան դասարանում: Նոր, անծանոթ միջավայր: Երգողին թվում է, թե ձայնը չլավեց, կորավ, լավագույն դեպքում՝ հազիվ լսելի է: Անկասկած՝ առանց ֆունդամենտալ փորձերի նորելուկին ներկայացում չի կարելի վստահել, իսկ փորձի ժամանակ նա պիտի հեղինակավոր խորհրդատու ունենա: Լավ է, եթե այդ խորհրդատուն հենց դասատուն է՝ բեմական կյանքով քրծված երգիչ: Վերջինս անմիջապես պիտի զսպի իր սանին, պահպանի նրան ֆորսի դիմելու վտանգից, այսինքն՝ ոչ միայն հասկացնի, այլև ներշնչի նրան, որ միջավայրը փոխվել է, որ ձայնի թվացող խլությունը կորուստ չէ, և նա պետք է շարժվի այդ նոր ելակետից: Հոգեբանական այդ փոխակերպումից հետո է, որ բեմական վաղորոք մշակված վարքագիծն ընկնում է բնական հունի մեջ: Կերպարն այստեղ կերտվում է ավելի շատ ներքինով, քան արտաքինով: Ոչ մի շարժում, ոչ մի դիմախաղ չի օգնի, եթե չլինի ներքինով վերապրած

գեղեցիկ ֆրազը, ավելի շուտ՝ ֆրազների միացությունը:

Այսպիսով, տարիների խոհն ու հույզը երիտասարդը հասնում է բեմ, և ինչ երջանիկ է նա, երբ ներկայացման երաժշտական ղեկավարը՝ դիրիժորը, Սուրեն Չարեքյանի մեան երաժիշտ է: Ես այդ երջանկությունն ապրել եմ մոտ 30 տարի առաջ:

Մասետրոյի համար առաջնային և ոչ առաջնային հատվածներ գոյություն չունեին: Նա ինձ ներշնչեց, որ ասերգերը նույնպես երգ են, և նրանցում կանտիլենան պահպանելը նույնքան կարևոր է, որքան որ ամենաժավալուն արիաներում: Իմ առաջին ֆրազի կատարելությունը՝ խոր շնչի վրա հիմնված բարձր պոզիցիան ես արդեն քաղում էի նրա մատուցած նախանվազից՝ լարայինների ունիտոնից, իսկ Or si ricusa al ֆրազի մեջ արդեն զգում էի մոտակա ֆա-ի պոզիցիոն բարձրությունը: Իսկ ֆա-ն գրեթե բոլոր բարիտոնների համար փորձաքար է: Բնականաբար՝ ծառանում է մեան հնչյունները զոցելու խնդիրը: Մանավանդ՝ i տառը, թող տարօրինակ չքվա, զոցելը խիստ անհարմար է: Այս խնդիրը ինքնահոսի թողնելը վտանգավոր է երկու տեսանկյունից. ֆորսը և չափից ավելի բաց երգելը կարող է վնաս հասցնել ձայնավարերին և կոկորդին, իսկ չափից ավելի զոցելը կարող է վերջնականորեն խլացնել, զուճազրկել հնչյունը: Ժերմոնի հնչյունային նկարագիրն էլ իր հերթին կխախտվի, նույնիսկ բեմական կերպարը կդադարի համոզիչ լինելուց:

Ես հնարավորություն եմ ունեցել ունկնդրելու իտալացի նշանավոր շատ երգիչների և միշտ զմայլվել եմ ասերգերը երգելու նրանց շնորհքով: Անկախ լայնությունից, հնչողության սրությունը երբեք տեղի չի տալիս, և այդ սրությունը, որ խոցում է նվագախմբի ամենաթանձր պատնեշը, լսելի է դահլիճում: Նման արտիստների ուժերով կերտած ներկայացումը, ինչ խոսք, օժտված է դրամատիկական թատրոնի բոլոր առավելություններով՝ զուճաբաժ երաժշտության ազդեցիկ և ընդհանրացնող ուժը: Ամեն բան տեղ է հասնում, միաժամանակ՝ ամեն ինչ երգվում է:

Քանի որ Ժերմոնի դերերգը արտաքուստ ստատիկ է, ապա երգչի մեան վարպետությունն այստեղ ավելի քան կարևոր է: Ամեն ինչ սկսվում է ձայնից, ժեստերը հնարավորին չափ ժլատ են: Եվ ֆրազը ֆրազի վրա դերերգի լարվածությունն աճում է, դարձյալ երգի միջոցով: Հենց այդ ֆրազների ռաջիոնալ զարգացումն է հասունացնում Pura siccome un angelo արիոզոն, որը մինչ այդ երգածի հանրագումարն է: Կիթառի ընկերակցություն հիշեցնող նվագաբաժինը կարծես ձգտում է կտրատել երգի կանտիլենան, հանել երգչին երգային հունից, և այդպես էլ կլինի, եթե դիրիժորն իր գործի վարպետը չէ. մեան ղեպերում երգողը պիտի ապավի-

նի միայն իր հմտությանն ու ճաշակին և անկախ նվագախմբի «տեղում դոփելուց»՝ առաջ մղի իր վոկալ գիծը: Դժվար է, բայց այստեղ պիտի լարես ամբողջ երևակայությունդ և օգնության կանչես Վերդիին, իհարկե, եթե նրա՝ արվեստը բազմակողմանիորեն ուսումնասիրել ես. գիտես դեռ Բելլինիից ու Դոնիձետտիից եկող կանտիլենային սկզբունքները: Վերդին ամեն ինչ արել է, որպեսզի երգողը չշեղվի այդ կանտիլենայից, որպեսզի արիտոզյի ամեն մի ֆրագ, թե՛ իմաստի, թե՛ դիմամիկայի տեսանկյունից լինի նախորդի շարունակությունը և հող նախապատրաստի մյուսի համար: Ամբողջ արիտոզն ուղղածիզ գեղեցիկ մի ժանյակ է, որի անհարթություններն անմիջապես նկատելի կդառնան, և փոքրիկ շեղումն իսկ ժապավենը կկտրի: Առանց միատարր, բայց և զուներ, երգեցողության ասեղիքն էլ տեղ չի հասնի, Ժերմոնի արցունքներին էլ չեն հավատա, մինչդեռ այդ արցունքները կեղծ չեն, ինչպես ոմանք մեկնաբանում են: Ավելի շուտ՝ կեղծ են ստացվում, որովհետև նրանք դուրս են մնացել բնական կանտիլենայի շրջանակներից:

Ժերմոնն անկեղծ է, հակառակ դեպքում զուգերգերում նրա և Վիոլետայի հոգիներն այդպես չեն ձուլվի, հարազատանա: Բնականաբար՝ պետք է ձուլվեն և նրանց ձայները՝ սուպրանո և բարիտոն, որն առանց հատակ suono-ի անհնար է, ուրեմն հոգիների այդ պահի հարազատությունն էլ դուրս կմնա ունկնդրի ուշադրությունից:

Վիոլետայի և Ժերմոնի հոգիների մտերմությունը թելադրվում է երաժշտությամբ: Երկուսն էլ անկեղծ կարեկցում են միմյանց, բայց ելքը մեկն է՝ զիջելու է Վիոլետան: Այդ մտերմության պահը հատկապես շեշտված է զուգերգի ավարտին, երբ Վիոլետան վերջնականապես զինաթափված, հարցնում է. *imponete*:

Այդ իսկ պատճառով հատկապես համոզիչ պիտի լինի վերջնամասը՝ հոգիների ձուլման անեացման զագաթնակետը: Հաջորդ, կարծես թե, ի միջի այլոց շարտած ֆրագները հասունացնում են բարիտոնի ամենասիրելի հատվածներից մեկը՝ *no generosa vivre* հատվածը, որտեղ երգիչը պիտի զգուշանա չափն անցկացնելու վտանգից, այլ կերպ կտուժի ոչ միայն վոկալը, այլև կերպարը:

Արիայի մեջ համոզելու մեկ ուրիշ շեշտ կա: Մեփական որդուն համոզելը ծերունի Ժերմոնի համար նույնիսկ ավելի դժվար է: Բարդանում են նաև երաժշտական ու վոկալ խնդիրները. հարթահարելիքն արդեն համաշխարհային օպերային գրականության բարդագույն արիաներից մեկն է, և երգիչն այստեղ պիտի աղերսներ գտնի նվագախմբի ընկերակցության մեջ: Նախ՝ արիայի առաջին իսկ կվարտան պետք է լինի նա-

խանվագի օրգանական շարունակությունը, հետո նա չպետք է նվագախմբի նոճվող ռիթմի գերին դառնա, այլ հատակորեն շարունակի իր կանտիլենան, որի կայունությունը չպետք է խախտվի նաև խոսքերի իմաստային շեշտերով: Կրծքայինով և բարձր պոզիցիայով կառուցված mezzavoce-ն, ուռչելով, բայց ձայնի սահմանները չխախտելով, պիտի հասունացնի աղերսանքի ամենահրամայական շեշտը՝ առաջին օկտավի սոլ բեմոլը, բայց այստեղ էլ սպառվելու իրավունք չունես, քանի որ հաջորդ ֆրազը նույնքան կատարելություն է պահանջում: Եվ ընդհանրապես սպառվելու իրավունք չունես. նույնիսկ վերջին հուսահատ ճիչից հետո. «Che dici? Ah, ferma!»:

Ունանք այն կարծիքին են, թե Ժերմոնը երկրորդ գործողությունում արդեն վերջանում է: Եթե դատելու լինենք ծավալի և տեխնիկական դժվարությունների տեսանկյուններից՝ գուցե և այդպես է, բայց չպետք է մոռանալ երրորդ գործողության մուսիքը և մուտքին հետևող գեղեցիկ անսամբլները: Սկիզբը պետք է լինի հստակ թեև անկեղծ մախապիճ, բայց նրա ժշտական նուրբ ընկալումների սահմաններում: Ժերմոնը մախատում է որդուն կոպիտ արարքի համար, միաժամանակ՝ անհանգստացած է նրա հետագա ճակատագրով: Ամբողջ բեմում նա միակ մարդն է, որին ամեն ինչ հայտնի է. պետք է ենթադրել, որ նա տեղյակ է, թե ում հետ է Վիոլետան եկել Ֆլորա Բելվուայի տուն. նրան սարսափեցնում է որդու և բարոնի մենամարտը: Այսբանից հետո ի՞նչ երանգ պիտի ընդունի Di sprezzo degno se stesso rende... մախապասությունը:

Հզոր forte-ից հետո կտրուկ դադար է, և Ժերմոնի՝ դադարին հետևող առաջին չորս ֆրազները հանկարծահաս ամպրոպի են նման: Չայրույթն ու վրդովմունքն անկեղծ են, մի բան, որ պահանջում է հավաք, բայց ոչ շատ զոց երգեցողություն: Այս ֆրազներից հետո հերոսին այցելում է այն անհանգստությունը որդու ճակատագրի համար, որի մասին արդեն ասացինք: Լարայինների և փողայինների լեզվով ասած՝ ձայնն այստեղ փոքրինչ «սուրդիմավորում» է, անցնում, մոտավորապես, երկրորդ գործողության զուգերգի mezzavoce -ին, իսկ հետո ... արժանին ես հատուցում գեղեցիկ անսամբլին՝ բարիտոնի երգաբաժնի առանձին ուռուցիկ պոռկույններով, որոնք պիտի լինեն նույնքան տրամաբանական, որքան այն օրերին, երբ դիրիժորական նոտակալի մոտ Սուրեն Չարեքյանն էր:

Չորրորդ գործողությունում Ժերմոնի երգաբաժինն ավելի փոքր է, բայց ամեն մի ֆրազ բնութագրական է, ծանրակշիռ: Այստեղ հերոսը ներկայանում է ավելի իղկված, ավելի մարդկային գծերով: Նա բարի աստվածավախ մարդ է և անկեղծորեն պատրաստ է Վիոլետային դուստր

ճանաչել, «սեղմել նրան իր կրծքին»: La promessa ֆրազը հենց այդ ներքինով է գունավորվում:

Di piu non lacerarmi արագընթաց այս նախադասությունը բեմական և վոկալ բավականին բարդ խնդիր է առաջադրում: Ինչպե՞ս խուսափել կեղծ երևալու վտանգից:

Հիմնական արտահայտչամիջոցն այստեղ, ասացինք, ձայնն է: Հարկավոր է գտնել նրա առավել բնական հնչողությունը, այսինքն՝ արհեստական որևէ միջոցի դիմելը վտանգավոր է: Մյուս կողմից՝ բարձր տեսիտուրան հաղթահարելու համար ռմանք ստիպված են արհեստականորեն զոցել վերջին հնչյունները. ոչ «ա-ն է ա», ոչ «օ-ն է օ»: Նման անորոշ հընչողությունն էլ անբնական վիճակ է ծնում, մի բան, որ մեկ անգամ ևս ապացուցում է, որ Ժերմոն երգելու համար վոկալ կատարյալ վիճակ է հարկավոր: Կեղծիքը չեն ընդունի ոչ երաժշտությունը, ոչ էլ բեմական կերպարը:

Այս դերերգի վերլուծությունից կուզենայի, որ երիտասարդները ճիշտ եզրակացություններ անեն, և եթե համեստ նկատառումներս էլ գեթ մեկ հոգու համար օգտակար դառնան, ապա գրիչս ձեռքս առնելու համար չեմ զղջա:

**ԴԱՎԻԹ  
ՂԱԶԱՐՅԱՆ**

**ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ  
ԵՐԳՆ ՈՒ ԲԱՆԸ**

Հայ ժողովուրդն իր բազմադարյան գոյության ընթացքում ստեղծել է մշակութային բազմաթիվ արժեքներ, որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչման և գնահատանքի են արժանացել:

Հայ միջնադարյան ճարտարապետությունը, մանրանկարչությունն ու երաժշտությունը վաղուց դուրս են եկել հայ ժողովրդի մշակութային արժեքների սահմաններից ու պատշաճ տեղ գրավել արվեստի ընդհանուր պատմության մեջ: Հայ ժողովրդի գոյատևումն ու ազգային անկախությունը հաճախ պայմանավորվել են հավատի ու եկեղեցու հաղթանակով: Մերտորեն կապված լինելով ժողովրդի պատմական ճակատագրի հետ, հայոց եկեղեցին արտաքին նվաճողների դեմ մղած պայքարում ի սկզբանե բերեց մի հասկացություն ևս, որը ազատագրական պայքարի համար հայ ժողովրդին համախմբելու ու ազգային ինքնագիտակցության բերելու գործում խոշոր դեր կատարեց:

Չորրորդ դարից սկսած, Քրիստոնեության մուտք գործելու հետ, Հայաստանում սկիզբ է առնում ու զարգանում հայ հոգևոր եկեղեցական երաժշտությունը: Քրիստոնեական շրջանի հոգևոր երգերի ու շարականների համար հիմք է դառնում հեթանոսական շրջանի երգ-երաժշտությունը, որը նույնանում է աշխարհիկ-ժողովրդական երաժշտության հասկացության հետ, որի ապացույցը հնագույն շարականների տաղաչափական ձևերի և եղանակների ընդհանրությունն է հին գուսանական արվեստի հետ:

Ամեն մի ժողովրդի երաժշտության պատմություն սկիզբ է առնում այդ նույն ժողովրդի ժողովրդական երաժշտության զարգացման հետ: Եվ ուրեմն պրոֆեսիոնալ երաժշտությունը սկիզբ է առնում իր իսկ ժողովրդական երաժշտությունից:

Հայ երաժշտության մեջ բուն ժողովրդական երաժշտությունից բացի, որոշ ժամանակաշրջանի տարբերությամբ սկիզբ են առնում գուսանական երգերը՝ դեռևս Գողթան գավառից, և այս երգերում հանդես են գալիս անհատ կատարողներ, որոնք հորինողներ են՝ խոսքի, երաժշտության և իրենք էլ կատարողներ:

Այստեղ տեղին է հիշել Կոմիտասին, որի ընկալումները խոսքի և երաժշտության միասնության վերաբերյալ խորը հիմքեր ունեն: Կոմիտասն է, որ գրում է, թե «Ժողովուրդը երգում է այնպես, ինչպես խորհում և խոսում է: Երգը և խոսքը միատեսակ կարողություն են, որքան լավ խորհի մարդը, այնքան լավ կխոսի ու կերգի: Խոսքն ու ձայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունը իբրև երկվորյակ քույրեր բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից»<sup>1</sup>:

Հեռավոր ժամանակներում բանաստեղծություն և երգ հասկացությունները նույնացած էին: Երգը բանաստեղծություն էր, և բանաստեղծությունը՝ երգ: Եվ զարգացավ հոգևոր երաժշտությունը: Նույն մեղեդին, որքան էլ զարմանալի թվա, կարող է միաժամանակ լինել և՛ կրոնական, և՛ աշխարհիկ: Դա մեր հոգևոր երաժշտության յուրահատկություններից է: Մեր հոգևոր մեղեդիները միաձույլ կառուցվածք ունեն, որոնց առանձնահատկություններից մեկը տրամադրության անկեղծությունն է. հոգևոր երգերում չկա ոչ մի կեղծ, անհույզ հնչյուն. Մեղեդին համակող է և սրբագրավ, հուզական է ու ներշնչող:

Մայրենի լեզվի և հոգևոր երգի պահպանումը ազգի գոյության ու հարատևման հիմքն է հանդիսացել: Դարերի ընթացքում հոգևոր երգը անընդհատ բյուրեղացել ու հղկվել է, դարձել ազգային տեսակետից ցայտուն ու կատարյալ:

Հայ հոգևոր երաժշտական ստեղծագործությունը որպես անգնահատելի մշակութային գանձ մեր ազգային պրոֆեսիոնալ երաժշտական մշակույթի անբախտելի մասն է կազմում:

Երբ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը նոր գրերի գյուտով զուրացած թարգմանում էին Աստվածաշունչը, հայերենի ու մայրենիի բարբառներով ու ազգային գրով երկնում երգ-բանաստեղծություններ, նրանք ստեղծում էին նոր՝ Քրիստոնեական շրջանի փառահեղ արվեստը իր դարավոր ավանդներով: Այս երկու մեծերը եղան թարգմանիչ, արձակագիր, բանաստեղծ, երաժիշտ, ճարտասան և բոլոր ասպարեզներում եղան միայն սկզբնավորող առաջինը:

Պետությունն ու եկեղեցին, մայրենի լեզվով ունենալով Աստվածաշունչը, նրա գաղափարները պիտի լայնորեն տարածեին ժողովրդի մեջ: Տարածման լավագույն միջոցը արվեստն էր՝ պոեզիան և երաժշտությունը: Եվ աստվածաշնչյան պատմություններն էլ կազմեցին Մեսրոպ Մաշտոցի պոեզիայի և երաժշտության հիմնական նյութը.

<sup>1</sup>Կոմիտաս, «Հողվածներ և ուսումնասիրություններ»: Եր., 1941, էջ 24:

զԳալուստ քո, Զրիստոս, այսօր  
 յԵրուսաղեմ՝ նոր եկեղեցի սուրբ,  
 Յաղթական երգով բարեբանեմք՝  
 Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Աստվածաշնչյան քարգմանական պոետիկան արդեն պարտադրում էր իր ձևերը, օրինակ՝ սաղմոսները, որ և բանաստեղծություններ էին, և ասերգ: Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ստեղծեցին ազգային պոեզիա և ազգային երգ-երաժշտություն: Նրանք հիմնեցին 3-6 տոմանոց բանաստեղծություն-երգեր, որ հետագայում զարգացան և հռչակվեցին շարական անունով:

Մեծն Կոմիտասը ուսումնասիրությունները գիտականորեն ապացուցում են հոգևոր և ժողովրդական երաժշտության ընդհանրությունը՝ որ այդ երկուսն էլ նույն ազգային երաժշտության երկու տարբեր ճյուղերն են: Հայ եկեղեցում սկզբնապես մեծ տեղ էր գրավում սաղմոսերգությունը, որը հետզհետե փոխարինվում է հոգևոր երգասացության առավել բարդ ձևերով՝ շարականներով ու տաղերով, իսկ այնուհետև հաստատվում է պատարագի ամբողջական երգասացությունը: Ի հայտ են գալիս անևատներ, որոնք տաղեր են հորինում և իրենք էլ երգում են: Դրանք են, որ մեր պատմության մեջ կոչվում են տաղերգուներ կամ տաղասացներ:

Հայ հոգևոր երաժշտությունը հնագույն երաժշտական մշակույթներից է, որը ձևավորվել է դարերի ընթացքում և հետզհետե հարստացել ու ճոխացել հոգևոր հայրերի բազմաթիվ սերունդների ջանքերով: Այն ձևավորվել է 4-5-րդ դարերում: Մեր ժողովրդական երգերը, ինչպես նաև հոգևոր երգը իր հիմքում մոնոդիկ է, և մինչև նորագույն ժամանակները հայ հոգևոր երաժշտությունը շարունակել է մնալ մոնոդիկ: Հայ հոգևոր երգարվեստը, զարգանալով, դարերի ընթացքում իր անդրադարձն է ունեցել մեր մշակույթի խոշորագույն դեմքերի ուշադրության կենտրոնում և հարստացել նրանց ստեղծագործություններով: Մեր գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցից սկսած մինչև Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին (5-րդ դար), Անանիա Շիրակացին, Սահակ Չորափորեցին (7-րդ դար), Ստեփանոս Մյունեցին (8-րդ դար), Գրիգոր Նարեկացին (10-րդ դար), Ներսես Շնորհալիս (12-րդ դար) հսկայական դեր կատարեցին հայ երաժշտության զարգացման մեջ այդ երգերի խաղացած դերի պատմական խոշոր նշանակությամբ: Հայ հոգևոր երգի զարգացման բարձրակետային շրջանը համդիսացան 10-13-րդ դարերը: Դա հետևանք էր հայ միջնադարյան քաղաքների ծաղկման, քաղաքային կյանքի աշխուժացման, ժողովրդական և գուսանական երաժշտության հասարակական դերի մեծացման:

5-րդ դարից սկսած հայոց կյանքում երաժշտություն և բանաստեղծություն հորինելը չափանիշ էր ընդհանուր զարգացածության, քաղաքակրթվածության: Հայ ազգի բոլոր Մեծերը, այդ թվում հանճարեղ տիեզերագետ Անանիա Շիրակացին, իրենց մասն ունեցան հին և միջնադարյան երաժշտության և պոեզիայի պատմության մեջ: Հոգևոր երաժշտության զարգացմամբ մտահոգված էին մեծաքանքար անձինք, և այդ էր պատճառը, որ այն ձեռք բերեց զարգացման և ծավալման բացարձակ մեծաշնորհ:

Հոգևոր երգերից շատերը եկեղեցուց դուրս այլևս կրոնական իմաստ չունենին և հնչում էին իբրև ազգային երգ, իբրև արվեստ և կյանքի ուղեկից: Օրինակ, Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» երգը զարդարել է անվանակոչության օրերն ու ուրախության ծեսերը:

Խոր - հուրդ մեծ եւ

սքան - չե - վի որ

յայսմ ա տուր յայտ

մե - ցաւ հո - վիւցն եր

գեւ ընդ հրեշ տակս

տան ա եւ տիս

աշ խար հիւ

10-րդ դարում հայ պոեզիայի լեռնապարում վեր խոյացավ հայ բանաստեղծության հսկան՝ Գ. Նարեկացին: Նրա միայն տաղերն էլ բավական են իր անունը փառաբանելու: Հապա «Մատենան ողբերգութեան» պոեմը, որը փառաբանություն է Արարչի, ըստ էության՝ ոչ միայն կրոնական Արարչի, այլ տիեզերքի այն ամենագոր ուժի, որը մարդուն թվում է կատարելություն:

Համաշխարհային գրականագիտությունը պատշաճն է հատուցել հանճարեղ Նարեկացուն, ընդգծելով իր հիացմունքն ու զարմանքը այն փաստի հանդեպ, որ «Աստվածային կատակերգություն»-ից հարյուրամյակներ առաջ աշխարհում վառվել է Վերածնության գազաթմակետը, որը կոչվում է «Մատենան ողբերգութեան».

Ի խորոց սրտի

խօսք ընդ Աստուծոյ

Չայն հառաչանաց հեծության սրտի Ողբոց աղաղակի,


Քեզ վերընծայեն, տեսողդ գաղտնեաց: Եւ մատուցեալ եղեալ,

Ի հուր թախծության Անձին տողորման՝ գճտուղ լրձից ճենճերոյ,

Մասանեալ մտացս, բուրվառու կամացս Առաքել առ քեզ՝:

Կրիկիկայի բանաստեղծական դպրոցի հիմնադիրը Շնորհալին էր՝ միջնադարի երկրորդ խոշորագույն բանաստեղծը: Ստեղծագործական ակունքներով կապված լինելով իր հանճարեղ նախորդի՝ Նարեկացու պոեզիային, Շնորհալին իրավամբ հանդիսացավ ամբողջ մի ուղղության հիմնադիր, նոր փայլ տվեց բանաստեղծությանն ու՝ երգարվեստին:

Ութ հարյուր և ավելի տարիներ են անցել այն օրից, երբ Հայոց աշխարհում առաջին անգամ հնչեցին «Առավօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Չարթիք» ստեղծագործությունները:



'Գրիգոր Նարեկացի, «Մատենան ողբերգութեան»: Եր., 1977, էջ 28:

Այս երգի ժողովրդական մեղեդուն հարազատ, քեթև քախիծով, բայց և հույսով աղեցուն երաժշտությունը իրար է հյուսում բնության և Աստծո պաշտամունքը: Այս ստեղծագործությամբ Շնորհալին ոգեղեն կամուրջ նետեց իր և Նարեկացու միջև, երկու դար հետո յուրովի շարունակելով «Մատեան ողբերգութեան» պոեմի տրամադրությունը:

Ինչպես նկատում է արվեստագիտության դոկտոր Ն.Թահմիզյանը՝ «Հայկական հոգևոր ինքնուրույն առաջին երգերը իրենց ծնունդով կապված են սաղմոսներին ու դրա համար էլ սաղմոսատիպ են, այնուամենայնիվ դրանք սաղմոսներ չեն, այլ երգեր, որոնց մեջ սկզբից ևեթ առկա է երգայնությունը»<sup>1</sup>:

Իսկ տաղերը անցյալի հայ բանաստեղծական-երաժշտական ժառանգության կարկառուն մնուշներից են: Տաղերի ժանրը հայ ժողովրդական և պոեզիայի մեջ երաժշտության մեջ գոյատևել է մինչև ուշ միջնադար: Տաղերի մեղեդիները համեմատաբար բարդ են, բայց և այլ նշանակություն է ստացել մեղեդիական զարգացման սկզբունքը: Եվ ինչպես պոեզիայի Ռ.Աթայանն է փաստում՝ «Լադային և ելևեջային զարգացման ազատության հետևանքով հոգևոր տաղերը ձևի տեսակետից ընդարձակ են ու բազմազան»<sup>2</sup>:

Տաղերը, որպես ինքնատիպ երգարվեստի մնուշներ, պարզ են, գուսպ, լակոնիկ ձևերի հետևում քաքնված է խորը հուզականություն, կենդանի շունչ և անմիջականություն, ինչը և հանգեցրել է նրանց աստիճանական զարգացմանն ու ապրել կատարելագործման շրջաններ:

Հոգևոր տաղերի մեղեդիական արվեստը կրում է միջնադարի հայ քաղաքային ժողովրդական երաժշտության ազդեցությունը:

Հայալեզու արվեստ ու գրականություն ստեղծելու ճանապարհին իր պետականությունը կորցրած հայ ժողովուրդը մշակութային լայն շարժում ծավալեց առաջին հերթին հայկական հոգևոր ինքնուրույն երգի ծագումն ու զարգացումը առաջ տանելով:

Հային իր ողջ կյանքի ընթացքում ուղեկցել է հոգևոր երգը, և այն եզակի երևույթ է հայ երաժշտական մշակույթի մեջ: Հայ քրիստոնեական եկեղեցու պատմական զարգացման ընթացքում արարողության երաժշտությունը միահյուսվել է՝ ժողովրդականը հոգևորով և մեկը մյուսին հարստացրել:

Իսկ հռչակավոր «Մուրբ, սուրբ»-ը մի հիմն է՝ նվիրված մարդուն և մարդկությանը:

Մ.Եկմայյան՝ հատված «Մուրբ, սուրբ»-ից.

<sup>1</sup>Տե՛ս. Մ.Մաչոնց: «Հնագույն երգեր» ժող. (առաջաբան՝ Ն.Թահմիզյանի): Եր., 1971, էջ 2-3:

<sup>2</sup>Տե՛ս. «Հայ միջնադարյան տաղեր» ժող. (կազմող և առաջաբանի հեղինակ՝ Ռ.Աթայան): Եր., 1972, էջ 4:

Սուրբ,  
 սուրբ  
 Տեր  
 դո  
 լու  
 բանց,  
 լի  
 են  
 եր  
 կինց  
 եւ  
 յեր  
 կիր  
 վա  
 ոօք  
 քո.

Մի կողմից *սուրբ*-ը երկնային Տերն է, որին հովում է խոսքը, մյուս կողմից Տիրոջ փառքով լի են երկինք և երկիր, ցրանով է հաստատված կյանքը, և անհատը ամբողջ էությամբ հռչակում է *Օվսաննա ի բարձունս*:

Կոմիտաս՝ հատված «Սուրբ, սուրբ»-ից.

Օրի - նու - բին ի բար - ձունս.օրի - նեալ, որ ե-կիր եւ գա - լոցո ես ան -  
 ւամբ  
 Տեառն: Օվ - սան - նա ի բար - ձունս:

Միայն 19-րդ դարի 70-ական թվականներից սկսած բազմաձայնության ներմուծումով ընդարձակվեց հոգևորի նշանակությունը, Մակար Եկմալյանի և Մեծն Կոմիտասի ջանքերով ուղեմշակվեց հայ ազգային երգի հետազա ընթացքը՝ հենվելով հոգևոր և ժողովրդական երգարվեստի հազարամյա ավանդույթների վրա: Եվ եթե Մահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը հիմնեցին և սկսեցին, ապա Մ.Եկմալյանն ու Կոմիտասը մաքրազարդեցին, մշակեցին և դասակարգեցին մեր հոգևոր երաժշտությունը: Նրանց ջանքերով կատարելության հասավ հայոց բազմաձայն Պատարագը:

Այսպես իրար հաղորդվեցին մեր հոգևոր երաժշտության և բանահյուսության 1700 տարիների անմահ ջահակիրները՝ Մեսրոպ Մաշտոցն ու Խորենացին, Նարեկացին ու Շնորհալին և նոր ժամանակի հանճար Կոմիտասը՝ իր հանճարը միախառնելով նախնիների հանճարին:

СУСАННА  
АМАТУНИ

## К ВОПРОСУ О ПРИНЦИПАХ МЕЛОДИЧЕСКОЙ СТРУКТУРЫ В ПЕСНЯХ КОМИТАСА

При изучении творческого наследия Комитаса возникает множество проблем, которые привлекали и продолжают привлекать исследователей разных поколений. Много сделано в области сбора, систематизации и издания его трудов, написаны монографии, исследования, посвященные его стилю, образно-эмоциональному строю и музыкальному языку, в частности, гармонии его произведений. Однако, при близком соприкосновении с его музыкой, перед исследователем открываются пласты пока еще не раскрытых закономерностей: как, например, взаимоотношения текста и музыки, принципов формообразования, особенностей мелодики, мелодических структур и т.п.

Известно, что, отбирая и очищая народные напевы от всего чуждого, наносного, Комитас на их основе создавал свои художественно-законченные, уникальные произведения. Песни Комитаса, выросшие на подлинном народном материале, отразили не только тончайшую интуицию композитора, но и превосходное знание им жизни, труда, помыслов армянского крестьянина, постижение самого процесса народного творчества.

В настоящей статье сделана попытка изучения мелодики песен Комитаса с точки зрения раскрытия их семантико-стилистических особенностей, наиболее характерных закономерностей мелодико-синтаксических структур. Отправным моментом в статье принят фундаментальный труд Х.С.Кушнарева<sup>1</sup>, в котором, наряду с другими, затронуты

<sup>1</sup>Х.С.Кушнарев. Вопросы истории и теории армянской монодической музыки. Л., 1958.

вопросы, связанные с особенностями интонационной природы и принципов формообразования народной песни.

Прежде чем перейти к основной проблематике настоящей статьи, считаем целесообразным остановиться на закономерностях строения мелодической линии песен Комитаса. Некоторые другие особенности мелодики этих песен рассмотрены в изданной ранее статье автора этих строк<sup>1</sup>.

При исследовании особенностей мелодики крестьянских песен необходимо учитывать их *гласовую природу*. И хотя тоновые фигуры в каждой отдельной песне очень пластичны и подвергаются индивидуализации, все же гласовость предопределяет порядок их последования. Разумеется, чем более сложна и развита песня, тем более индивидуализированы структуры гласовых попевок. Не останавливаясь специально на этой стороне крестьянских песен, отметим лишь ту огромную роль, которую в ней играют ладовые побочные опоры. Для всех типов<sup>2</sup> монодий в армянском народном творчестве, как, впрочем, и других народов, опевание побочных ладовых опор является весьма важным выразительным и формообразующим фактором.

Л.Мазель замечает: "... старинные напевы, не имевшие поддержки гармонии, должны были постоянно возвращаться к определенным опорным звукам лада, опевать их - во избежание потери стержня и распада формы"<sup>3</sup>.

Другая, важнейшая черта, характерная для мелодики крестьянских песен различных типов, это завершенность и цельность формы. В них четко вырисовываются композиционные разделы, т.е. стадии завязки, развития и развязки. В подавляющем большинстве случаев кульминационная фаза представляет собой опевание побочной ладовой опоры, по-

---

<sup>1</sup>С.Аматуни. О некоторых принципах мелодической структуры в лирических песнях Комитаса. В кн.: Народное творчество и профессиональное искусство. Ер., 1985, с. 61-72.

<sup>2</sup>О классификации армянских народных песен по признаку их склада см.: Х.С.Кушнарев, цит. изд., с.151-152.

<sup>3</sup>Л.Мазель. Раздумья об историческом месте творчества Шостаковича. Журнал "Советская музыка", 1975, №9, с.9.

сле чего развязка осуществляется путем постепенного нисхождения интонации к тонике и обоснования последней.

Х.С.Кушнарев в упомянутом труде указывает на исключительную напевность армянской крестьянской песни. Проследим, какими средствами достигается эта напевность в лирических песнях и, шире, в песнях распевно-мелодического склада. Напевность мелодии достигается, прежде всего, плавностью движения, т.е. при анализе интонационного состава монодий обнаруживается, что наиболее характерными интонационными ходами мелодической линии являются ходы на секунду и терцию.

Определяя плавное движение, Л.Мазель писал: "Понятие *плавного* движения несколько шире поступенного. С одной стороны, в него естественно включить, кроме поступенного движения, повторение звука той же высоты, которое, конечно, не нарушает плавности и имеет большое значение. С другой стороны, к плавному движению принято относить и терцовые шаги. Ощущение плавности терцового шага, возможно, объясняется не только незначительной величиной интервала, но отчасти и ролью в народном музыкальном мышлении элементов пентатоники, в которой интервал малой терции образуется смежными ступенями; большая же терция приравняется в более развитых ладах к малой терции по своей ступеневой величине и, в частности, может заменять малую терцию в тональных секвенциях"<sup>1</sup>.

Анализируя с этой точки зрения интонационное строение песен Комитаса, выясняется, что в них движение по интервалам секунды и терции преобладает, а шаг на кварту (и в редких случаях - шире кварты) представляет единичные случаи. Встречаются песни, в которых не наблюдается ни один интонационный шаг шире терции. К ним относятся не только широкораспевные лирические мелодии, как например, "Չինար էս", но и песни других жанров: "Չեմ կրնա իսկ", "Ինչի արքայ", "Դժուր կուտա արքայի սարեր" и другие. (Необходимо

<sup>1</sup> Л.Мазель. О мелодии. М., 1952, с.43-44.

подчеркнуть, что в распевных лирических песнях весьма важную роль играют как повторение звука на той же высоте, так и интонационные ячейки, основанные на повторении нисходящей (точнее - хореической) секунды, как например, в песнях "Тун ари", "Ов арек", "Келе, келе"(припев), "Яр джан у марджан" и др.).

Интервал кварты чаще всего встречается в мелодике песен ограниченное число раз, в связи с различными выразительными и формообразующими функциями. Образование интервала кварты после цезуры не воспринимается как скачок. Так, в песне "Ов арек" в начальном четырехтакте, после первой фразы, вторая начинается с той же высоты (III ступень лада), и потому образуется интервал кварты между вводным звуком и побочной опорой лада зол.3; в песне "Келер, цолер" второй период двухчастной формы начинается с верхней потенциальной тоники двойственного лада (d), образуя с предыдущим кадансом на нижней тонике (a) интервал кварты. Во всей мелодии этой песни другого шага на интервал шире терции нет. Одна-единственная кварта после цезуры встречается также в песне "Ле, ле, яман".

Выразительность квартового интонационного хода в лирических песнях на фоне плавного движения мелодической линии особенно подчеркивается в распевах, которые обычно появляются при опевании опорных точек лада. Выступая в составе интонационной каденции, распевная кварта придает ей незавершенный, вопросительный оттенок ("Келе, келе", "Кахан" и др.), а иногда нисходящий квартовый ход служит подчеркиванию утвердительной интонации, как например, в песне "Цирани цар".

Наиболее характерная кварта - это скачок от тоники к побочной ладовой опоре на четвертой ступени лада в моменты завязки мелодии, после чего идет непременно "заполнение" этого скачка. Выразительная и формообразующая роль такой кварты отличается от описанных выше случаев. Подобного рода скачки и на квинту служат средством подчеркивания побочной ладовой опоры (ладов квартовой и квинтовой основы) и чаще встречаются в кульминационных фазах ме-

лодического целого. Естественно, квартовые интонационные ходы встречаются и в других мелодических функциях, в моментах развития, развязки, но для лирических, распевных мелодий они менее типичны.

Другая характерная особенность мелодики лирических песен - это наличие в них широких распевов. Мы отнюдь не склонны утверждать, что распевность, распевание слова, когда на один слог текста приходится несколько звуков мелодии, типично только для лирической песни. Такое распевание встречается и в трудовых песнях, и в речитативных и даже моторно-танцевальных мелодиях. Хотя для последних все же типичным является соответствие звуков мелодии и слогов текста. Заметим попутно, что мелодика армянских крестьянских песен лишена оборотов орнаментального или мелизматического типа. Известно, что украшающие мелкие длительности орнаментального типа принято вообще относить к восточной музыке. Но армянской крестьянской песне это совершенно чуждо. Вот что пишет Х.С.Кушнарев: "Встречающиеся в крестьянских мелодиях фигуры, образованные последованием тонов мелкой длительности, являются не чем иным, как омузыкаленными ритмо-интонациями человеческой речи"<sup>1</sup>.

"Распевы служат эмоциональному углублению песни: они замедляют развитие поэтической мысли и чувства, и поэтому значительная длительность каждой фазы переживания говорит о его глубине, "истовости". С другой стороны, временные отвлечения от текста дают возможность сосредоточить внимание на выразительности мелодических интонаций"<sup>2</sup>.

Известно, что в армянской народной песне часто, так же, как и в песнях других народов, благодаря распеванию слога на сильной доле такта, происходит дробление сильной доли. При этом, звук, попадающий на более слабую долю, оказывается более долгим. Однако, в таких условиях синкопа в обычном смысле не возникает. Это происходит

<sup>1</sup> Х.С.Кушнарев, цит. изд., с.156.

<sup>2</sup> Л.Мазель, В.Цуккерман. Анализ музыкальных произведений. М., 1967, с. 659.

оттого, что первый звук распетого слога ощущается ярче, сильнее. Об этом пишет В.Цуккерман: "Распевы имеют значение и для ладовой стороны песни. Звуки, которые попадают на начальные моменты распевов, слышатся особенно заметно".

Например, в песне "Келе, келе" дробление сильной и относительно сильной долей второго такта синкопы не образует.



Здесь кроется разгадка столь распространенного в армянской профессиональной музыке мелодического оборота, который встречается в творчестве различных поколений.

9. Аристид Квинтилиан, О музыке. Aristidis Quintiliani. "De musica libri", III, ed. A.Tahn, Bezolini, 1882. Հղումը բերում ենք ըստ Ե.Վ.Հերցմանի հոդվածի "Восприятие разновысотных звуковых областей в античном музыкальном мышлении", "Вестник древней истории", 1971, N 4, с. 187. Աղբյուրը մեզ տրամադրել է Կարինե Խոլարշաշյանը:

10. Регистровые зоны системы гласов по древнейшим космологическим и мифологическим представлениям описала К.Худабашян. См. Античная музыкально-космологическая концепция регистровой дифференциации полной совершенной системы и ее проявление в армянской музыке, «Հայ արվեստին նվիրված հանրապետական փառատոնի զինական կոնֆերանս», զեկոցումների թեզիսներ, Եր., 1997, էջ 84: Отметим также, что согласно данной системе место Чг и Тп - в регистре "g" второй октавы - "с" третьей октавы. Однако оба гласа обычно транспонируются на октаву вниз - в "g" первой октавы - "с" второй октавы (6, 172, 173, нотные примеры 74, 75).

11. Բարսեղ Կեփարազի, Յաղագս ձայնից թէ աստի զայն, "Revue des etudes armeniens", выпуск 26.

12. Мелодические варианты - один из наиболее "знаковых" признаков армянской традиционной (монодической) духовной музыки. Они возникают при характернейшем для данной области явлении - распева одного и того же поэтического текста различными мелодиями.

13. Невматический мелодический стиль характеризуется соответствием слогу небольшой мелодической фразы, состоящей из двух, четырех или пяти звуков, К.Перриш, Дж.Оул, Образцы музыкальных форм от григорианского хора до Баха, Л., 1975, с. 9. При синтагматическом мелодическом стиле слогу соответствует всего один звук, Ю.Евдокимова, История полифонии, М., 1983, с. 13.

14. Четвертый вариант - из "таяновского" "Шаракноца" (с. 287), где первая ода нашего канона в свою очередь представлена в двух мелодических вариантах.

15. Перевод с армянской нотописи на европейскую данного и следующего "титесяновского" вариантов осуществлен автором статьи.

**ԼԻԼԻԹ  
ՄԻՄՈՆՅԱՆ**

**ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ «Գ(Ն)ԱՅԵՔ, ՏԵՍԵՔ» ԵՎ  
ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ «ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ  
Ի ՎԵՐԱՅ ԾՈՎՈՒ ԵՎ ՆԱԲԻ»  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ  
ՎԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ կան փոքր և մեծ լուծված հարցեր, որոնց լուծումը ոչ միայն ամփոփում է ուսումնասիրության այս կամ այն ոլորտը, այլև մշակված դաշտ է ստեղծում հետագա ուսումնասիրությունների համար: Մույն փոքրածավալ ուսումնասիրության նպատակը ոչ միայն երկու ժողովրդական երգերի համեմատականն է և դրանց նույնական կամ տարբեր լինելու հարցի պարզումը, այլև առհասարակ «միևնույնի» և «տարբերի» հարցը դնելը: Բանն այն է, որ ֆոլկլորի առանձնահատկություններից մեկն այն է, որ միևնույն տեքստային և երաժշտական կտորներ և ամբողջական տեքստեր և մեղեդիներ հանդես են գալիս մի շարք երգերում, ընդ որում միևնույն բանաստեղծական տեքստն ունեցող երգերը կարող են ունենալ տարբեր մեղեդիներ և, ընդհակառակը, բոլորովին տարբեր բանաստեղծական տեքստերը կարող են երգվել միևնույն մեղեդիներով: Այս պայմաններում չափազանց բարդանում է պարզել թե՛ երգի ժանրը և թե՛ այն հարցը, արդյոք գործ ունենք միևնույն երգի տարբերակների՞ հետ, թե՞ դրանք պարզապես տարբեր երգեր են: Ֆոլկլոր ուսումնասիրողը համարյա անընդհատ բախվում է նաև այն դժվարության հետ, որից համարյա զերծ է գրավոր մշակույթ ուսումնասիրողը. դա մոռացությունն է, կորուստը, որն անխուսափելի է բանավոր արվեստի դեպքում: Աշխատանքը հատկապես դժվարանում է, երբ պատմականորեն փոփոխվում է ֆոլկլորի միջավայրը, գործածությունից դուրս են գալիս կենցաղի որոշ առարկաներ, որոնց շուրջը հյուսվում և կատարվում էին երգերը (սանդ, խնոցի, գութան և այլն), մոռացվում և այլևս չեն նշվում որոշ տոներ, որոնց ընթացքում հորինվում և կատարվում էին հատուկ երգեր (օրինակ, Բարեկենդանը, Նավասարդը), կերպարանափոխվում և վերանում են ծեսերը, ինչից տուժում են առաջին հերթին հատուկ ծիսա-

կան երգերը (Նուրի-Նուրիներ, ավետիաներ, մասամբ հարսանեկան երգեր և ողբեր): Բանահավաքը այդպիսի երգերը որպես օրենք ձայնագրում է իրենց բնական վիճակից դուրս, մոռացումներով և աղավաղումներով, և երաժշտագետ-ֆոլկլորագետը ստիպված է լինում աշխատանքը սկսել վերականգնողական-համեմատական փուլից, իսկ եզրակացություններն էլ միշտ չէ որ բավարար մշութական հիմք են ունենում: Պետք է հաշվի առնել նաև, որ որոշ տարրեր իսպառ կորչում են, մի մասն էլ պատմական վերափոխումներից անճանաչելի է դառնում:

Այս պայմաններում նման ուսումնասիրության մեջ հուսալի արդյունք ստանալու համար հնարավոր չէ հիմնվել մեկ մեթոդաբանության վրա՝ օրինակ, բանաստեղծական տեքստի և երաժշտության համակցման սկզբունքների, այլ անհրաժեշտ է համադրել պատմաաշխարհագրական, կառուցվածքային (ստրուկտուրային կամ ձևական), համեմատական (ներմշակութային և միջմշակութային) մեթոդաբանությունների վրա, աշխատելով օգտվել նաև այլ գիտությունների՝ լեզվաբանության, ազգագրության և այլն, տվյալներից:

«Գացեք, տեսեք» («Ելեք, տեսեք», «Լրթանք, նեյիմք», «Եկեք, տեսեք», «Էկեք տեսանք» և այլն) երգը գրեթե բոլոր ժողովածուներում արձանագրված է իբրև Բարեկենդանի ծիսական երգ<sup>1</sup>: Մ.Մովսիսյանը (Բենսեն) այս երգի բանաստեղծական տեքստի մի տարբերակ է բերում «Վիպական և աշուղական երգեր» ընդհանուր վերնագրի ներքո<sup>2</sup>:

Մռաջին իսկ հայացքից բացալայտ է երգի արխանիությունն ու ծիսական ֆունկցիան: Նախ և առաջ այդ է ցույց տալիս «Ելեք, տեսեք» (տարբերակը՝ «Գ(ն)ացեք, տեսեք») ծիսական բանաձևը, որը մուտքի, խորհրդավորության մակարդակին անցնելու, վերին աշխարհի հետ կապ ստեղծելու բանաձևն է և առկա է մի շարք տարբեր բովանդակու-

<sup>1</sup>Երգի եղանակավորված տարբերակները կարելի է գտնել հետևյալ հասցեներով. Զ. Կարա-Մուրզա, Խմբերգեր, Եր., 1978, էջ 38-42, N 16, Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 5, Եր., Հայպետհրատ, 1972, էջ 155, N 90, հատ. 3, էջ 38, N 15, հատ. 10, էջ 56-57, NN 25, 26, 27, Մպ.Մեյլիբեան, Ան. Տեր-Ղևոնդեան, Ժողովրդական երգեր, հատ. 1, Շիրակի երգեր, Թիֆլիս, 1917, էջ 56, N 116, Մ.Թումանյան, Հայրենի երգ ու բան, հպտ. 1, Եր., Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ-ում, 1972, էջ 66-67, N 20, էջ 68, N 22, էջ 70, N 22ա և 22բ, հատ. 2, էջ 92, N 58, հատ. 3, էջ 30, N 24, Ա.Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Եր., 1985, էջ 55, N 37 (21), էջ 45-48, N 28 (18), էջ 49, N 30 (19): Հրատարակության պատրաստվող Մ.Թումանյանի Հայրենի երգ ու բան՝ ժողովածուի չորրորդ հատորում ընդգրկված են ևս երեք մտուշ՝ NN 134, 135 և 136: Բացի նշված երգերից, մեր տրամադրության տակ կան ևս չորս անտիպ մտուշներ, որոնք պատրաստվում են հրատարակության: Այսպիսով, երաժշտագիտական շրջանառության մեջ առկա են «Գացեք տեսեք» երգի 24 տարբերակներ:

<sup>2</sup> Մ.Մովսիսյան (Բենսեն), Հարք (Մշո Բուլանըխ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 3, Եր., 1972, էջ 132:

թյուն, բայց միևնույն ծիսական ֆունկցիան ունեցող (կամ ունեցած և կորցրած) երգերի և բանաստեղծական տեքստերի մեջ: Ծիսական ֆունկցիայի հետ է կապված ինքը երգի կուտակողական, հարցուպատասխանային կառուցվածքը, որը ենթադրում է կատարում մեկից ավելի անձանց կողմից և ենթադրում է շարժումային տեքստ: Վերջապես, տաղաչափական-վանկաչափական կառույցը, ռիթմական բանաձևկա-ծությունը, որոշ դեպքերում՝ նաև ինտոնացիոն մտածողությունը (ընդ-հույ մինչև ռիթմիտոնացիոն բանաձևային դարձվածքները) միավորում են «Գացեք, տեսեք» երգը տոմարային այլ երգերի, մասնավորապես, Բարեկենդանի երգերի հետ:

Մեզ հայտնի չէ, թե Բարեկենդանի հատկապես ո՞ր օրը և ո՞ր ծեսի համալիրում է կատարվել այս երգը, սակայն համեմատական հետազո-տությունը քույլ է լնալիս ենթադրել, որ այն կապված է լուսնային ամանո-րի ծեսերի հետ<sup>1</sup>: Այն մասին, թե ինչ կարգի ծեսի մեջ կարող էր մտնել այս երգը, մենք կարող ենք միայն ենթադրություններ անել: Ենթադրություն-ների համար մեզ հիմք է տալիս համեմատական նյութը: Այսպես, Իտա-լիայում կարճավալի վերջին օրերին կատարվում էր Տարվա և 12 ամիսնե-րի դիմակավորված խաղը, որի ընթացքում Տարին հերթով հարցնում էր ամիսներին, թե ի՞նչ են նրանք և ի՞նչ կարող են անել, իսկ ամիսները թվարկում էին իրենց արժանիքները<sup>2</sup>: Այս առումով առավել արժեքավոր է դիտարկել բաբելոնյան ամանորյա «Խարաբ» երգ-առասպելը, որը կա-տարվում էր ամանորյա ծեսերի կոմտեքստում, ավանդված է ուշ շրջանի բաբելական արձանագրությունների միջոցով (Ք. ա. երկրորդ հազարա-մյակի սկիզբ) և կապված է Իսին-Լարսա լոկալ մշակույթի հետ<sup>3</sup>: Այս եր-գում յուրաքանչյուր ամիս ներկայացված է մեկ աստվածությամբ (Խա-րաբը առաջին ամիսն է), և յուրաքանչյուր հաջորդ աստվածություն սպա-նում է իր նախորդին և իշխում նոր ամսվա ընթացքում: Ուշագրավ է, որ պնակիտը պարունակում է ցուցումներ այն մասին, որ երգը կատարվում էր նաև ժողովրդի կողմից:

<sup>1</sup>Բարեկենդանի իբրև լուսնային ամանորի տեսությունը կներկայացվի հրատարակու-թյան պատրաստվող «Հայ ժողովրդի տոմարային տոները և երգերը: Չմեռային տոներ» աշխատության մեջ: Այստեղ միայն նշենք, որ տեսության հիմք է ծառայում Ա.Օդարաշյա-նի կոսհումը Բարեկենդանի ամանորյա ֆունկցիայի մասին, տես՝ Ա.Ա.Օդարաշյան, Ամա-նորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, 9, Եր., 1978, էջ 24-25:

<sup>2</sup>Календарные обычаи и обряды народов зарубежной Европы. Весенние празд-ники, М., 1977, с. 18-19.

<sup>3</sup>V.Haas, նշվ. աշխ, էջ 80: Հետագա շարադրությունը՝ էջ 81:

Չնայած երգի տարածվածությանը, երգն ամբողջովին վերլուծելու լուրջ փորձեր մինչ օրս արված չեն: Թե՛ բանասերները, թե՛ երաժշտագետները սովորաբար սահմանափակվում են միայն երգի ուրույն և չափազանց հազվագյուտ ձևի մասին արձանագրությամբ, որպես օրենք, այն դնելով նման ձևի մեջ ստեղծված «Տաղ ուրախութեան ի վերայ ծովու և նախ» երգի կողքին:

Այս ուղղությամբ առաջին փորձը պատկանում է Գ.Սրվանձոյանին<sup>1</sup>, որը, սակայն, ոչինչ չի ասում քննվող երգի արժանիքների կամ առանձնահատկության մասին: Հարցին անդրադարձել է նաև Վ.Վարդ. Տեր-Մինասյանը<sup>2</sup>:

Ա.Մնացականյանը իր ժողովածուի մեջ «Գացեք, տեսեք»-ը վերահիշյալ «Տաղ ուրախութեան ի վերայ ծովու եւ նախ» երգի կողքին դնելով, նշում է, որ այդպես է վարվել Գ.Հովսեփյանը: Մ.Բրուտյանը այս երգի տարբերակն է համարում «Երթանք նայինք ի՞նչ կա ծովին» երգը<sup>3</sup>: Ա.Մնացականյանը գտնում է, որ «Գացեք, տեսեք» ժողովրդական երգը ստեղծվել է «Տաղ ուրախութեան խաղու ի վերայ ծովու եւ նախ» երգի նմանությամբ<sup>4</sup>: Մ.Թումանյանի կարծիքով, «Այս երգն իր տարազային ձևավորմամբ ու ընդհանուր կառուցվածքով որոշակի կապված է միջնադարյան տաղարանների մեջ արձանագրված «Ելեք տեսեք զինչ կայր ծովուն, ային զային տայր» տաղին, այն տարբերությամբ, որ այստեղ պատկերված է հին, ավանդական կենաց ծառի գաղափարը, իսկ մինչև մեր օրերը հասած «Գացեք, բերեք» կամ «Ելեք տեսեք ով է կերեր զեծ»-ի ամենաբազմազան ու ճյուղավորված ասացվածքներում ու երգվածքներում, մասնավորապես, բարեկենդանյան խրախճությունների ժամանակ նույնքան ավանդական սովորությունների կենդանի պատկերը կա, որ բարեբախտաբար բավականին գոհացուցիչ կերպով հավաքված է անցյալ ու այս դարասկզբի բանահավաքների կողմից»<sup>5</sup>: Ավելի մանրամասնորեն Մ.Թումանյանը այս հարցի քննությանն անդրադարձել է այլ տեղում<sup>6</sup>: Բացի կառույցից, որը նա հազվագյուտ է համարում հայ երգի հա-

<sup>1</sup>Գ.Սրվանձոյան, Բրդուճ մը Վանս ժողովրդական անգիր բանահյուսութենն, Երկեր, հատ. 1, Եր., 1978, էջ 114:

<sup>2</sup>Վ.Վարդ. Տեր-Մինասեան, Անգիր դպրո: փին եւ առակք, Կ.Պոլիս, 1893, էջ ԼԷ-ԼԸ:

<sup>3</sup>Մ.Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Եր., 1985, էջ 207:

<sup>4</sup>Ա.Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Եր., 1956 (հետագայում Միջնադարյան երգեր), էջ 587:

<sup>5</sup>Պետք է լինի «զեծ», մենք հարազատ ենք բնագիր տեքստին – Լ.Ս.:

<sup>6</sup>Մ.Թումանյան, Հայրենի երգ ու բան, հատ. 3, Եր., 1986, էջ 170:

<sup>7</sup>Մ.Թումանյան, Հայրենի երգ ու բան, հատ. 1, էջ 207-210:

մար, նա ընդհանրություն է գտնում նաև տաղաչափության և պարային բնույթի մեջ:

Միջնադարյան ձեռագրերում պահպանված «Տաղ ուրախութեան ի վերայ ծովու եւ նախ» այդ միակ ձայնագրյալ նմուշը գետեղված է Գ.Հովսեփյանի «Ժողովրդական բանահիստութեան հետքեր միջնադարեան տաղաբաններում» հոդվածում, որտեղ բերված է նաև «Գ-ացեք, տեսեք» երգի բանաստեղծական տեքստը<sup>1</sup>: Սակայն Հովսեփյանն ամենևին էլ չի պնդում, որ այս երկուսը միևնույն երգի տարբերակներ են, այլ բերում է տաղի երեք տարբերակներ (հեղինակի տերմինով՝ «եղանակավորություններ») և գրում. «Առանց ժողովրդական ոգու ազդեցութեան անկարելի էր, որ գրական մի տաղ երեք տարբեր եղանակատրութիւններ ունենար, իսկ կազմությունը, ինչպէս նկատեցինք, յատուկ է ժողովրդական երգերին, որի մի նմուշ համեմատութեան համար կցում ենք մեր տաղի վարիանտներին»<sup>2</sup>:

Պատահական չէ, որ մենք հարցի պատմությունը դիտում ենք «հետադարձ ընթացքով», այսինքն սկսելով ավելի նոր տվյալներից և ավարտելով այս երգերի մանության ամենաառաջին հիշատակություններից մեկով: Մեզ համար չափազանց հետաքրքիր էր այն հարցը, թե ինչպե՞ս է երաժշտագիտության մեջ ձևավորվել այդ կարծիքը: Այս կերպ դիտելով, միանգամից պարզ է դառնում, որ մյուս երեք գիտնականները հիմնվել են Գ.Հովսեփյանի նյութի վրա, և որ նրանց եզրակացությունները բխում են բանաստեղծական տեքստի և ոչ՝ երաժշտության բնույթից: Ուրեմն մեզ համար կարևոր է քննել երաժշտական բաղադրիչը և պարզել, արդյոք ինչպիսի՞ն է Մ.Թումանյանի հիշատակած կապը այս երգերի միջև: Հնարավոր երեք տարբերակներն են.

ա. դրանք միևնույն երգի տարբերակներ են,

բ. դրանք տարբեր երգեր են, որոնցից մեկը ստեղծված է մյուսի նմանությամբ,

գ. դրանք միևնույն ժանրի տարբեր երգեր են:

Բացի Գ.Հովսեփյանի՝ նշված հոդվածում բերած օրինակներից, Ա.Մնացականյանը «Տաղ ուրախութեան խառն ի վերայ ծովու եւ նախ» երգի (հետագայում՝ «Տաղ») բանաստեղծական տեքստի մեկ օրինակ է բերում «Հայկական զարդարվեստ» ուսումնասիրության մեջ (նույն տեքստի վրա է հիմնվում Մ.Թումանյանը) և ևս 10-ը՝ «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուի մեջ:


<sup>1</sup>Գ.Հովսեփեան, Ժողովրդական բանահիստութեան հետքեր միջնադարեան տաղաբաններում, Արարատ, Վաղարշապատ, 1989, Յունուար, էջ 44-47:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 44:

Նախքան երկու երգերի մեղեդիները վերլուծելը և համեմատելը հարկ ենք համարում անդրադառնալ այն գործոններին, որոնք Մ.Թումանյանը բավարար պայմաններ է համարում երկու երգերը նույնացնելու համար<sup>1</sup>: Հիրավի, երկու երգերն ունեն մի շարք ընդհանրություններ, որոնցից առավել նշանակալիցները դրանց՝ ծիսական երգի ժանրին պատկանելն է և կառուցվածքի նմանությունը:

Ինչ խոսք, ծես-միստերիայում իր որոշակի տեղն ունեցող «Ելեք, տեսեք, ի՞նչ կայր ծովին» երգը (այս է եղանակավորված տարբերակի առաջին տողի տեքստը) իր ֆունկցիայով նման է «Գացեք, տեսեք» երգին, սակայն չի պահպանվել որևէ հիշատակություն այն մասին, թե կոնկրետ ո՞ր տոնի հետ է այն առնչվում և արդյոք առհասարակ կապվա՞ծ է այն տոմարային ծեսերի հետ թե ոչ<sup>2</sup>, մինչդեռ «Գացեք, տեսեք»-ը, անկասկած, Բարեկենդանի երգ է:

Երկու երգերի կառուցվածքն էլ կուտակողական է (կումուլյատիվ), այսինքն, յուրաքանչյուր տուն իրենից ներկայացնում է որոշակի օղակ, որի նյութը հանդես է գալիս մաս հաջորդ օղակում՝ խտացված և բանաձևված տեսքով: Օղակները գումարվում են իրար, և արդյունքում ստացվում է մի կառույց, որը կարելի է պատկերել հետևյալ ձևով.





<sup>1</sup>Մ.Թումանյանը ուղղակի չի նշում երկու երգերի նույնությունը, սակայն բերելով «Անշունչ պիտի որ ասեն զայսբան մեծ տներս, և պարի ծայն է» 1640 բվ. ծանոթագրությունը «Տաղ ուրախութեան...»-ի վերաբերյալ, մա անմիջապես գրում է, «Ուրեմն, այս երգերը երգվում և արտասանվում էին պարելով: Բարեբախտաբար, եղանակի շատ տարբերակներ գրի են առնված Հայաստանի զանազան վայրերում:» Մ.Թումանյան, նշվ. աշխ., հատ. 1, էջ 208: Եթե հեղինակը նշում է բազում տարբերակների մասին, ուրեմն խոսքը «Տաղ վասն ծովու...»-ի մասին չէ, որովհետև գրառված է այդ երգի միայն մեկ տարբերակը, այն էլ ոչ այն տեքստով, որը բերում է Թումանյանը: Հետևաբար հեղինակը կամա թե ակամա ընդունում է այդ երգի նույնականությունը իսկապես մի շարք օրինակներով ներկայացող «Գացեք, տեսեք»-ի հետ:

<sup>2</sup>Ա.Մնացականյանը նշում է միայն, որ երգը տոհմածառին մկրված տոնի, իսկ ավելի ուշ մաս հարսանիքի ժամանակ կատարված պարերգ է եղել՝ Միջնադարյան երգեր, էջ 585: Քանի որ մինչև XX դ. 1-ին կեսը հարսանիքների առատության շրջանը Բարեկենդանն էր, բացառված չէ, որ «Տաղը» նույնպես Բարեկենդանի երգ է:

Այստեղ մեծ քառակուսին բուն տունն է, իսկ փոքրը՝ կուտակվող բաղադրիչը, որի հետզհետե բազմապատկման<sup>1</sup> հաշվին գնալով ավելի երկար են դառնում երգի տները: Պետք է նշել, որ նման կառուցվածք կարող են ունենալ նաև հեքիաթները (օրինակ՝ հայկական «Պոչատ աղվեսը» կամ ռուսական ֆոլկլորից մեզ ծանոթ «Չ.Նոյիկ-բոբոնիկը»): Այս կառուցվածքն ունի նաև հունական ժողովրդական «Տերուկի և արքադաղի մասին» երգը<sup>2</sup>: Որոշ հեքիաթներ և բանաստեղծություններ կառուցվում են միայն կուտակվող բաղադրիչով, օրինակ, Հ.Թումանյանի «Էս էն տունն է» մանկական բանաստեղծությունը<sup>3</sup>:

Զննվող երգերի տների տեքստերը, հետևաբար և երաժշտությունը, ունեն հետևյալ տեսքը.



{  
նան ի ծովին, ծովն յարետուն, մանր ավազին  
էժն ըզթփուն, թուփն ըս իգուն, էգ Վարազուն }  
}

որ կծղփայր ծով (խաղայր, ծփայր)  
հալալ է, Կրմո, հալալ է, հալալ է,  
Ջանո, հալալ է (հալալ է, ջալալ է)

Ծովըն ծփայր, ալին գալին տայր  
Չեզ՝ Բարեկենդան; մեզ՝ բարի Ջատիկ էս  
ի՛նչ քաֆուր դարու հասանք և այլն

<sup>1</sup>Պետք է նշել, որ ներկայացվող գծագիրը պատկերում է երաժշտության և ոչ՝ տեքստի կառուցվածքը, քանի որ յուրաքանչյուր տան տեքստային բաղադրիչները փոփոխվում են, մինչդեռ մեղեդին միևնույնն է՝ երբեմն չնչին տարբերակումներով:

<sup>2</sup>Треческие народные песни, М., 1957, с. 172-174

<sup>3</sup>Հ.Թումանյան, Երկեր երկու հատորով, Եր., 1958, հատ. 2, էջ 210-213:

Տեքստերը շարադրել ենք տող առ տող, բաժանելով իմաստալից փոքր խմբերի, վերևում բերելով «Տաղ»-ի տեքստը, իսկ ներքևում՝ «Գացեք, տեսեք»-ի: Քառակուսի փակագծերով նշել ենք փոփոխական միավորները, իսկ ֆիգուրային փակագծով այստեղ և հետագայում նշում ենք կուտակվող անդամը: Այս տեքստով դիտելիս, ակնհայտ է դառնում, որ տուները կառուցվում է հետևյալ կերպ.

Ժխական բանաձև 1 - հարց – ծխական բանաձև 2 – պատասխան – կուտակվող անդամ - ամփոփող և ավարտի բանաձևեր: Այսինքն, կուտակվող անդամը շրջապատված է այլ անդամներով, որոնցից առաջինը պարունակում է փոփոխական միավորներ, իսկ մյուսը ամփոփոխ է:

Պետք է նշել, որ բովանդակային ընդհանրություն երգերը գրեթե չունեն: Այս առումով կարելի է հիշատակել միայն «Գացեք, տեսեք» երգի տարբերակներից մի քանիսում հանդիպող այն օղակը, որտեղ այժը ուտում է արևը՝ «տիկ՝ զարևուն»<sup>2</sup>: Մրա հետ զուգահեռվում և «Տաղ»-ի նույնական հատվածում հանդես եկող օրինակներից մեկի «ծովն յարեւուն»<sup>3</sup> արտահայտությունը: Մեկ այլ տեղ «Գացեք, տեսեք»-ը վերջին օղակում ունի «Աստված է պսակել փեսան»<sup>4</sup>, իսկ «Տաղ»-ը՝ նույն օղակում «Տերն ի խաչին», հետևաբար, երկու երգերն էլ իրենց բովանդակության մեջ սկսվում են արևից և ավարտվում Աստծով: Մույն հոդվածի մեջ չենք անդրադառնում տեքստերի խորհրդանիշներին, նկատենք միայն, որ եթե «Տաղ»-ի բովանդակությունը Կենաց Ծառն է, ապա «Գացեք, տեսեք»-ի բովանդակությունը կապված է բնության շրջապտույտի և տարեշրջանի հետ:

Անդրադառնալով երկու երգերի երաժշտական լեզվին և բուն երաժշտական բնութագրերին, գտնում ենք, որ պետք է սկսել «Տաղ»-ի միակ օրինակից, որը գրառել է Ս.Ամատունին Քիշնևում, Հ. վարդապետ տ. Մովսիսյանցից հայկական ձայնանիշերով: Երգը բերում ենք եվրոպական համակարգով (օրինակ 1):

Երգն ունի հիմնականում վանկային-ներվանկային երգառոճ, բացի «Ծովըն ծըփայր» անդամից, որն ունի զարդադրում ոճ:

Ուտանավորն ունի շատ հետաքրքիր կառույց: Առաջին երկու տողերը բաղկացած են ութական վանկերից, բաժանված երկուական քառավանկ

<sup>1</sup>«(Տիկ) Բնիկ հայ բառ, որ նախապես նշանակում էր «այժ» և ծագում է հնիս. dig- «այժ» բառից» Հ.Աճառյան, հայերենի արմատական քառարան, հատ. 4, Եր., 1979, էջ 405:

<sup>2</sup>Զ. Կարա-Մուրզա, Խմբերգեր, Եր., 1978, էջ 39:

<sup>3</sup>Ա.Մնացականյան, Հայկական զարդարվեստ, էջ 104:

<sup>4</sup>Ա.Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Եր., 1985, էջ 51:

անդամների: Առաջին տողի առաջին անդամի մեջ, ջնայած խոսքային շեշտին՝ «-լեք» վանկի վրա, միակ շեշտն ընկնում է վերջին վանկի վրա, քանի որ առաջին երեք վանկերը պարունակում են մեկական, իսկ վերջինը՝ երեք ամանակ: Փոխարենը երկրորդ անդամի մեջ հավասարապես շեշտված են առաջին և չորրորդ վանկերը, որոնք պարունակում են երեքական ամանակ: Երկրորդ տողի առաջին անդամը նույնանուն է առաջինի առաջին անդամի հետ, մինչդեռ երկրորդում ութմական տարբերակման շնորհիվ շեշտվում են առաջին, երկրորդ և չորրորդ վանկերը: Կուտակվող անդամն ունի — — — տեսքը: «Որ կծփայր» անդամն ըստ էության նույն կառույցն է. սակայն ամանակների թիվը տարբեր է. 3 1 2 6, այսինքն, վերջին վանկերի վրա երաժշտությունը կրկնակի դանդաղում է և «ծով» բառի վրա կանգ առնում երկարեցված նոտայով: Հաջորդ քառավանկը կառուցված է ութմական և վանկաչափական նույն մոդելի վրա, ինչ որ առաջին անդամը, սակայն վերջին վանկի վրա է ընկնում 15 ամանակ պարունակող վարընթաց երաժշտական ֆրազը: Ավարտի բանաձևում նույնպես կա հակասություն խոսքային և երաժշտական շեշտերի միջև: Շեշտված են չորրորդ քառամանակ և հինգերորդ երկարեցված վանկերը:

Վանկաչափական այսպիսի կառույցը հուշում է ձևը և մետրաոլիթմիկ համակարգվածությունը: Երգի ձևական խոշոր միավորները իրենց տևողությամբ անհամաչափ են, սակայն ավելի փոքր միավորների դիտումը թույլ է տալիս դատել որոշակի սիմետրիկ կառույցի մասին.

<p>A (չափավոր) 2 տող (4 պայմանական տակտ կամ երկու նախադասություններից կազմված պարբերություն) a b a1 b1</p>	<p>B (հորդոր, արագ) կուտակվող անդամ+1 պայմանական տակտ  {b2} b4</p>	<p>C (ծանր) 1 տող (2 պայմանական տակտ)  c d</p>
--	--	--

Այս ձևը կարելի է դիտել նաև հետևյալ կերպ՝ բուն երգ+ավարտի ընդլայնված բանաձև, ինչը բավականին տրամաբանական է թվում նաև չափի տեսակետից, քանի որ առաջին հինգ պայմանական տակտերը (հաշվի չենք առնում կուտակվող անդամի կրկնությունը) ընթանում են 2/4 չափով, իսկ վեցերորդ տակտը ավելի շուտ տեմպի դանդաղեցում է, քան չափի փոփոխություն, մինչդեռ վերջին տակտերը ավելի բազմանդամ են և ծավալուն: Ռիթմական միավորների քննությունը ավելի է պարզում ձևական կառույցը: Ամբողջ երգը կառուցված է կետագծային կշռությային



կարծիքով, երաժշտության տեսակետից, առավել մոտ է «Տարդ»-ին: Բանահավաքը գտնում է, որ այս երգը հավանաբար ստեղծվել է հենց այդ տարածքում<sup>1</sup>, այսինքն տվյալ դեպքում գործ ունենք ինվարիանտին առավել մոտ կանգնած մնուշներից մեկի հետ (օրինակ 2):

Նախ և առաջ նշենք, որ մեր դիտարկած գրեթե բոլոր մյուս տարբերակները սկսվում են տակտի ուժեղ (շեշտված) մասից, ուստի այս առումով տվյալ մնուշը, մնան լինելով «Տարդ»-ին, տարբերվում է նույն երգի այլ տարբերակներից:

Վանկաչափական կառույցն ունի հետևյալ տեսքը (իբրև ամանակ ընդունված է ութերորդական նոտան)

$\frac{1}{2}$   $\frac{1}{2}$  1 2  $1\frac{1}{2}$   $1\frac{1}{2}$  1 2 3 5 (10 վանկ, կրկնվում է 2 անգամ)

Ե - լե՛յք, տե - սե՛յք վի՛րն է կի - րի՛ մեր թյուփ

2 1 1 2 2 1 1 2 (8 վանկ, կուտակվող օղակ)

ուլն էր թը - փու՛ն, թուփն էր ի - գու՛ն,  
էգ Վա - րա - գա՛, տակն ա կյու - կյա՛  
ինչ որ ա - սե՛ս, վե - րե՛ս կյու - կյա՛

$\frac{1}{2}$   $\frac{1}{2}$  2  $\frac{1}{2}$   $\frac{1}{2}$  2 (6 վանկ)

խա - լալ էր, ջա - լալ էր

2 1 1 2 2 1 1 2 (8 վանկ)

ի՞նչ քա - րի տա - րեյ մ՛եր է - կավ

3 3 1 2 3 1 2 3 (6 վանկ)

վեր - մե՛ գյո՛ վեր - մե՛ գյո՛ վեր - մե՛:

Ինչպես տեսնում ենք, այս երգում  $\sim\text{---}\sim$  կառույցը ունենք ոչ միայն կուտակվող անդամի, այլև հետագա մյուսի մեջ:

Այս երգն ամբողջովին վանկային-ներվանկային երգառճով է և իր բնույթով շատ մոտ է «Տարդին»: Կուտակվող անդամը ցեզուրայով (5 ամանակ պարունակող վանկ) անջատված է նախորդ մյուսից, որն այլևս հանդես չի գալիս նույն տան մեջ: Վեցվանկանի երկու կառույցները, զուգա-

<sup>1</sup>Մ.Թումանյան, նշվ. աշխ., հատ. 2, էջ 229: Պետք է նշել, որ Վանա տարբերակները, որոնք սկսվում են «Ելեք տեսեք» բանածևով, իսկապես կազմում են առկա մնուշների մեծ մասը (ներառյալ բանաստեղծական տեքստերի գրառումները):

հեռվելով տեքստի մեջ, ևակադրվում են երաժշտական միջոցներով, քանի որ «վեր մե գյո...» տեքստի մեղեդին վերջնակադանս է: Այստեղ, ինչպես և «Գացեք, տեսեք» երգի ոչ մեկ այլ նմուշի մեջ զարդուլը ոճով հատված չենք գտնում: Փոքր-ինչ կոպիտ ընդհանրացման դեպքում կարելի է ասել, որ երգի հիմքում է  $\downarrow \uparrow \uparrow \downarrow$  ռիթմական բանաձևը: Երզը ծավալվում է a1 տոնիկայով, կվինտային հիմքով և g1-e2 ձայնածավալով եղական միմորի սահմաններում: Ձևը ցուցաբերում է եռմասայնության որոշակի տարրեր.

A (հարց) B (կուտակվող անդամ) C (ամփոփում-ավարտ), որտեղ (C հատվածում) հանդես են գալիս A հատվածի ռիթմի տոնացիոն դարձվածքները, ինչը կրկնվող կառույցի պատրանք է ստեղծում:

Ակնհայտ է, որ «Գացեք, տեսեք»-ի նույնիսկ այս, «Տաղ»-ին առավել մոտ, տարբերակը համեմայն դեպս այլ երգ է ոչ միայն բանաստեղծական տեքստի, այլև երաժշտության առումով: Բացի տեքստի կառուցվածքից, որը շոշափելիորեն ներագրում է նաև երաժշտական ձևի վրա, դիտարկելի են երկու երգերի հետևյալ ընդհանրությունները.

ա. կրկնվող անդամի ռիթմը,

բ. հիմնական վանկային-ներվանկային երգառճը,

գ.  $\downarrow \uparrow \uparrow \downarrow$  ռիթմական բանաձևի նշանակալիությունը:

Ինչ խոսք, այս ընդհանրությունները բավարար չեն երկու երգերը նույնացնելու համար: Ավելին, դրանք բավարար հիմք չեն տալիս նաև պնդելու, որ այս երգերից որևէ մեկը ստեղծված է մյուսի նմանությամբ, քեև, մյուս կողմից, երաժշտական և տեքստային համընկնումները ենթադրել են տալիս, որ այս երգերը կարող են ստեղծված լինել միևնույն ազգագրական շրջանում (Վասպուրական) և ունեն որոշակի տիպաբանական նմանություն: Հաշվի առնելով այս փոստարկները, պետք է եզրակացնել, որ միակ հավաստի բանը, որ կարող ենք ասել, այն է, որ դրանք միևնույն ժանրի երկու տարբեր երգեր են:

ՆԱԲԵԿ  
Վ. ԹՈՎԱՄԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՎԱՐՄՈՆԻԿ  
ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷԶԵՐ

Պատմությունն իր ոսկե էջերում նրբորեն պահպանում է տեղեկություններ այն մասին, որ դեռևս Տիգրան Մեծի ժամանակ (մ.թ.ա. I դար) հայերն աղիքից լարեր են պատրաստել և արտահանել, որ Վերածնունդը (Renaissance) Հայաստան աշխարհում սկսվել է, ի տարբերություն Եվրոպայի, XI-XII դարերում: Նման տեղեկություններն, անշուշտ, էլ ավելի լայն լուսաբանման և հետազոտման կարիք ունեն:

... Դեռևս XIX դարի կեսերին էր, որ Կոստանդնուպոլսում թատերական, երաժշտահասարակական կյանքի ծաղկմամբ երևան եկան երաժշտական միություններ, որոնց գործիչները հայ մտավորականներն էին՝ նրանք էլ հենց լուսավորչական անգնահատելի օգտակար գործունեություն ծավալեցին: Ստեղծվեցին և տարածվեցին ազգային երգարաններ (Ե.Տնտեսյանի «Նվագք հայկական»-ը, երաժշտության դասագիրք (Նիկողայոս Թաշչյան, 1878թ.), երաժշտական առաջին ավանախները՝ «Զնար արևելյան»-ը, 1858թ.՝ Արիստակես Հովհաննիսյանի և Գաբրիել Երանյանի խմբագրությամբ, «Զնար հայկական» երաժշտական ընկերությունը, 1861թ., որը գլխավորեցին Գ.Երանյանը և Ն.Թաշչյանը, իսկ 1862թ. հետո՝ Տ.Չուխաշյանը և Կ.Ֆոսկինին:

Ժամանակի հովերն արտահայտվում էին և կատարողական արվեստի բնագավառում: Գոյություն ունեցող գործիքային անսամբլները և մասնավորապես «Զնար հայկական» ընկերությանը կից նվագախումբը կատարում էին ազգային երգեր ու պարերգանակներ, թատերական ներկայացումների երաժշտություն և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Հայերը մեծ դեր խաղացին Մերձավոր Արևելքի խոշորագույն կենտրոններից մեկի՝ Կոստանդնուպոլսի թատերական, մշակութային և մասնավորապես՝ երաժշտական կյանքի աշխուժացման գործում:

1968թ. Կոստանդնուպոլսում Տ.Չուխաջյանի նախաձեռնությամբ ստեղծվում է սիմֆոնիկ նվագախումբ<sup>1</sup>: Ռեժիսոր և դերասան Հեքիմյանի գլխավորությամբ հայ դերասանները դրամատիկական թատրոն հիմնադրեցին, մասնակցում էին թուրքերեն բեմադրվող երաժշտական առաջին ներկայացումներին: Երաժշտության պատմության թուրք մասնագետների վկայությամբ հենց կոստանդնուպոլսաբնակ հայերի շրջանում է դրսևորվում առավել վաղ հետաքրքրությունը արևմտաեվրոպական երաժշտական մշակույթի նկատմամբ:

Այդ ժամանակների երաժիշտներից առաջին հերթին պետք է նշել ջութակահարներ Սեպուհին, Թադևոսին (Քեմանի): Վերջինիս մասին Հակոբ Պարոնյանն ասել է, թե անհնար էր ավելի լավ ու ավելի նրբորեն ներկայացնել մարդկային բազմազան զգացումներն ու ապրումները, քան դա իր ջութակով անում էր Թադևոսը: Նրա ճարպիկ մատները ջութակից հրաշքներ էին քանում<sup>2</sup>: Նշվածներին ավելացնենք ջութակահարներ Խուդավերդիի, Ռեթևոսի, Քուշնարյանի անունները, որոնց միջից էլ դուրս եկավ Գրիգոր Սինանյանը: Նրա անվան հետ է առնչվում հայկական առաջին խոշոր գործիքային անսամբլի ու եվրոպական տիպի երաժշտական պրոֆեսիոնալ մանկավարժության կազմակերպումը:

Հենց Գրիգոր Սինանյանն էր, որ 1860-ական թվականներին ստեղծեց սիմֆոնիկ տիպի հայկական առաջին նվագախումբը, որի երաժիշտների կազմը շուտով հասավ 15-ի, ապա և Հարություն Մինանյանի (Գրիգորի որդու) ղեկավարության ժամանակ՝ 40 երաժշտի: Ահա այս նվագախումբն է, որի մասին Ա. Տիրատուրյանը գրել է. «Չենք սխալվի եթե ասենք, որ Գրիգոր Սինանյանը առաջին հայն էր, որը կազմակերպեց հայկական առաջին նվագախումբը»<sup>3</sup>: Իսկ հայ թատրոնը մինչ այդ ուներ Կարապետ Փափագյանի նվագա-

<sup>1</sup>Գ.Գյողակյան, «Կոմիտաս», Եր., 2000, էջ 11:

<sup>2</sup>Ա.Ցիցիկյան, «Հայկական աղեղնային արվեստ», Եր., 1977:

<sup>3</sup>«Թեոդիկ», ամենամյա տարեցույց, Վենետիկ, 1922, էջ 171, 173:

խումբը, որն սպասարկում էր Արամյանի թատրոնի ներկայացումները: Սակայն Մինանյանի նվագախումբն էր, որ սյուրբերաբար ելույթներ էր ունենում: Կատարման ծավալները զուտ համերգային էին, նվագացանկը լայն ընդգրկում ուներ և ի վերջո լուսավորչական մեծ ծավալի աշխատանք էր կատարում: Մերծավոր Արևելքում նվագախումբը մեծ տարածում գտավ ստեղծագործական բազմակողմանի հետաքրքրությունների տեր Հարություն Մինանյանի ղեկավարության շնորհիվ, որին շատ էր սիրում և գնահատում Տիգրան Չուխաջյանը<sup>1</sup>: Կովկասի առաջադեմ գործիչներն ու երաժիշտները հորդորում էին նվագախմբին տեղափոխվել Թիֆլիս՝ բեղուն գործունեությունն ու աշխատանքը ավելի բարենպաստ պայմաններում շարունակելու համար:

«Հայկական նվագախմբի» գործունեությունը դադարեց 1896թ. տեղի ունեցած հայտոնի դեպքերի պատճառով, երբ նվագախմբի երաժիշտներից շատերն անմեղ նահատակներ դարձան<sup>2</sup>:

Հայկական երկրորդ նվագախումբը ստեղծվել էր արդեն Հայաստանում, քաղաքամայր Երևանում՝ 1924 թվականին:

Դարերի ընթացքում մշակված, հղկված ու դասակարգված հոգևոր երաժշտություն ունեցող Հայաստանը, երաժշտության ճայնային ներդաշնակության ու նրա չափառիթմիկայի մասին ուսմունք ունեցող հայկական մշակույթը, որ մշակվել էր դեռևս IX-XIV դարերի ընթացքում՝ XX դարի սկզբում գտնվում էր եվրոպական երաժշտության տեսական մտքի նվաճումների մակարդակին: Սակայն պատմական ողբերգական անցուդարձերը հնարավորություն չէին տալիս ամբողջությամբ այն ի դերև հանելու և մասսայականացնելու: Եվ ահա Հայաստանում 20-ականներին, Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ, ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն էին ընձեռում ամբողջ թափով զարգացնելու ոչ միայն ժողովրդական տնտեսությունը, այլև մշակույթը, արվեստը՝ երաժշտությունը, նկարչությունը, գրականությունը, տեսական միտքն ու ճարտարապետությունը:

Մեծն Կոմիտասը երազում էր իր սիրելի հայրենիքում գոնե մեկ

<sup>1</sup> «Բազմավես», 1904, փետրվար, էջ 73:

<sup>2</sup> Մինանյանների գործունեությունը նկարագրում է Անահիտ Ցիցիկյանն իր «Հայկական աղեղնային արվեստ» գրքում:

երաժշտական օջախ ունենալու մասին, ինչը իրականացավ XX դարի 20-ականներին, երբ պատմական հզոր իրարանցումներից, թոհուրոհից հետո փոքրատարածք, ընկճված Հայաստանում 1921 թվի դեկտեմբերի 22-ին Ռոմանոս Մելիքյանի և, անշուշտ, երկրի կառավարության ջանքերով բացվեց երաժշտական ստուդիա, որն էլ երկու տարի անց՝ 1923թ. հոկտեմբերի 21-ին վերանվանվեց կոնսերվատորիայի:

Կոնսերվատորիայի հիմնադրման առաջին շրջանից այստեղ դասավանդում էին ջութակահարներ Ավետ Գաբրիելյանը, Դավիթ Սողոմոնյանը, Հովհաննես Հովհաննիսյանը (Օգանեզովը), ալտահար Անդրեյ Կոտլյարսկին, թավջութակահարներ Վիկտոր Ավեդիկովը և Արտեմի Այվազյանը, դաշնակահարներ Աննա Մնացականյանը, Եվգինե Խանկալամյանը, Եվգինե Խոսրովյանը և Օլգա Բաբայանը, երգիչներ Արուս Բաբայանը և Միքայել Մելիքսեթյանը, փողային բաժնի ղեկավար Վիլիելմ Շպեռլինգը, երաժշտագետ Օլսաննա Տեր-Գրիգորյանը, որոնք և ապահովեցին նորաստեղծ բուհի առաջին ակնառու հաջողությունները:

...1924 թվականի հոկտեմբերին Երևան մշտական բնակության եկավ Ալեքսանդր Սպենդիարյանը: Պատմական իր հայրենիք վերադարձած մեծ կոմպոզիտորը, լինելով հայ սիմֆոնիկ երաժշտության դասական, դարձավ նաև Հայաստանում սիմֆոնիկ տիպի առաջին նվագախմբի կազմակերպիչն ու ղեկավարը:

«Սպենդիարյանը, - գրում է Մարինա Բերկոն, - մտադիր էր կազմակերպել իր ստեղծագործություններից կազմված համերգ, այդ նպատակով էլ նա դիմել է կոնսերվատորիայի տնօրեն Արշակ Աղամյանին, որը կոմպոզիտորի տրամադրության տակ է դրել դասատուներին և լավագույն աշակերտներին»<sup>1</sup>:

Ա.Սպենդիարյանն իր "Симфонический оркестр Эриванской гос.консерватории" հոդվածում գրում է. «Կազմվեց մտավորապես 18-19 հոգուց բաղկացած մի նվագախումբ՝ առաջին և երկրորդ ջութակներ, ալտեր, թավջութակներ, կոնտրաբասեր, դաշնամուր, կլարնետ և տամբուրի»<sup>2</sup>:

<sup>1</sup>Մ. Բերկո, «Կոմիտասի անվան կոնսերվատորիա», Եր., 1973, էջ 33:

<sup>2</sup>Տե՛ս "Спендиаров о музыке" (сост. В.Бальян), Ер., 1971, с. 39.

Դժվար չէ պատկերացնել XX դարի 20-ական թվականների Երևանը՝ խաղողի իր այգիներով, նեղլիկ փողոցներով, կիզիչ արևով ու մոտ 30 հազար բնակչությամբ: Բարձրահարկ շենքերի բացակայություն, մի քանի երկու-երեքհարկանի տուն քաղաքի կենտրոնում, որոնցից մեկում էլ տեղավորված էր կոնսերվատորիան, ուր իր փորձերն էր անցկացնում նվագախումբը:

Մպենդիարյանի հեղինակային համերգը տեղի ունեցավ պետական թատրոնի դահլիճում, 1924 թվականի դեկտեմբերի 10-ին: Նուտակալի առջև կանգնած էր ինքը՝ կոմպոզիտորը:

Անհրաժեշտ է նշել, որ մինչ տեղական կադրերից կազմված այդ նվագախմբի պատմական համերգը Երևանում ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում սիմֆոնիկ տիպի ոչ մեծ նվագախմբերի (անսամբլների) ելույթներ՝ հրավիրված արտիստների ուժերով: Այսպես, «Ճորճիղային Հայաստան» օրաթերթում (15 սեպտեմբերի 1923թ.) կարդում ենք:

#### *Լրատու*

«Միխ. Վոլովիչի հրաժեշտի երեկույթ-բենեֆիսը: Այսօր, սեպտեմբերի 15-ին, կոմունալ տնտեսության զբոսավայրում կկայանա լարավոր նվագախմբի դիրիժոր, ջութակահար Միխայիլ Վոլովիչի հրաժեշտի երեկույթ-բենեֆիսը: Երաժշտախումբը կնվագի բացառապես Չայկովսկու երկերից: Բենեֆիցիանտը կնվագի սոլո:» (Միխայիլ Վոլովիչի՝ Թիֆլիսից հրավիրված փոքրիկ նվագախումբը 1923-ին «ամառային» համերգներ է նվագել Երևանի կոմունալ տրնտեսության զբոսայգում - Ն.Թ.):

«Ամառային համերգաշրջաններ» է կազմակերպել (նույնպես Թիֆլիսից հրավիրված երաժիշտների ուժերով) նաև Երևանի կոնսերվատորիայի դասատու, ջութակահար Դավիթ Սողոմոնյանը: Նույն «Ճորճիղային Հայաստան» օրաթերթից (1 հուլիսի 1924թ.) տեղեկանում ենք Գ.Սողոմոնյանի ղեկավարած հրավիրված լարային նվագախմբի 1924 թվականի հունիսի 28-ի «ամառային» համերգի մասին, որի ընթացքում հնչել են. Գրիգի «Պեր Գյունտ» սյուիտը, Արենսկու «Լեզգիներ-Վարիացիները», Չայկովսկու «Կարապի լիճը» քալետից սյուիտը և Ալեքսանդր Մպենդիարյանի «Դրիմի էսքիզները»: Անդրանիկ այդ համերգի մասին «Ճորճիղային Հայաս-

տան» օրաբերքը գրել է. «... Հասարակությունը գրավել էր ամբողջ սրահը, պատշգամբը, մինչև իսկ դրսից լսողներ կային... Թե ինչու ընկ. Սողոմոնյանը մինչև հիմա հանդես չէր գալիս իր կարողությամբ, այդ մեզ համար անհասկանալի է, իսկ իր համար աններելի»:

Այս և նման փաստերը վկայում են, որ սիմֆոնիկ նվագախմբի ստեղծումը Հայաստանում կենսական անհրաժեշտություն էր դարձել: Ա.Սպենդիարյանի հեղինակային համերգը լուրջ խթան եղավ դրա համար: Սիմֆոնիկ նվագախմբի ստեղծմանը ձեռնամուխ եղավ Երևանի կոմսերվատորիայի ղեկավարությունը 1924-25 ուսումնական տարում:

Կոմսերվատորիայի՝ Ռոմանոս Մելիքյանին փոխարինած տնօրեն, արվեստագետ, կոմպոզիտոր, գեղագետ, հայ արվեստի անխոնջ մշակ և նվիրյալ Արշակ Աղամյանը, դեռևս անտեղյակ Սպենդիարյանի մտադրություններից, կոմսերվատորիայում զարկ տալով նվագախմբային բաժնի զարգացման, նպատակ ուներ ստեղծելու սիմֆոնիկ նվագախումբ:


Սպենդիարյանի պատմական համերգից մեկ ամիս անց, 1925 թվականի հունվարի 4-ին Աղամյանը դիմում է Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարին:

Մեջբերենք այդ փաստաթուղթը:

*Լուսժողկոմին՝ կոմսերվատորիայի նվագախմբի կազմակերպման հարցի առթիվ*

«1924թ. դեկտեմբերի 22-ին Երևանի կոմսերվատորիան թևակոխեց իր գոյության չորրորդ տարին...

... Մեր նոր աշխարհը, որ անցել է պատերազմների բովից և կոփվել հեղափոխության մեծ հնոցում, կարիք է զգում երաժշտական արտահայտության ավելի բարդ և նոր միջոցների: Մեր ժամանակի հեղափոխական ոգին արտահայտող ամենաուժեղ միջոցը նվագախումբն է: Վերջինիս գոյությունը անպայման զարկ է տալիս մեր երաժշտագետների ստեղծագործական կարողությանը, որոնք անցել և անցնում են լուրջ դպրոց, մյուս կողմից նվագախմբի բացակայությունը կասեցնում է Հայաստանի երաժշտական կուլտուրայի բնական աճեցումը: Այս նկատառումներով կոմսերվատորիան արդեն անցել է սեփական նվագախմբի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներին: Այս աշխատանքները



Երևանի կոմսոբկառուրիայի մի խումբ դասատուներ:  
Չախից աջ (կանգնած) Դավիթ Մարտիրոսյան, Օվանես Տեր-Քրիզոսյան, Հովհաննես  
Հովհաննիսյան (Օգանեզով), Միքայել Միզազյան, (նստած) Սպիրիդոն Մելիքյան, Ալեքսանդր  
Սպենդիարյան, Արշակ Արզանյան, Արտեմի Այվազյան:

կիրականանան, եթե կոնսերվատորիան ունենա սրա իրագործման համար բավական չափով հատուկ ֆինանսական միջոցներ: Նվագախմբի կազմակերպման այս բացատրական գրությանը կցում ենք առաջին սկզբնական անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը: Դիմելով Լուսժողկոմատ, կոնսերվատորիան սրանով խնդրում է հնարավորություն տալ իրականացնելու այս նոր գործը:

Ա. Ադամյան

Կոնսերվատորիայի վերատեսուչ

4/1-1925թ.<sup>1</sup>:

Ստանալով Լուսժողկոմի աջակցությունը, Ադամյանն անցնում է նվագախմբի կազմակերպման գործնական աշխատանքին: Հետաքրքրական է նրա՝ «Հայաստանում սիմֆոնիկ նվագախմբի ծնունդը» անտիպ հոդվածում բերված նորաստեղծ նվագախմբի կազմը. 1-ին ջութակ՝ 7 մարդ, 2-րդ ջութակ՝ 5, ալտ՝ 4, թավջութակ՝ 3, կոնտրաբաս՝ 2, շեփոր՝ 2, գալարափող՝ 2, տրոմբոն՝ 1, հելիկոն՝ 1, ֆլեյտա՝ 2, հորոյ՝ 1, կլարնետ՝ 2, ֆագոտի նվագաբաժինը կատարում է թավջութակը, 1 հարվածային և դաշնամուր: Ընդամենը 35 հոգի<sup>2</sup>:

Նվագախմբի առաջին փորձերն անց էին կացնում ջութակահարներ՝ Հովհաննես Հովհաննիսյանը (Օգանեզով), Դավիթ Սողոմոնյանը, իսկ նրանց օգնում էին Վիլիելմ Շպեռլինգը, Անդրեյ Կոտլյարևսկին, Արտեմի Այվազյանը: Նրանք ոչ միայն մասնակից էին բոլոր փորձերին, այլև դասերի ընթացքում իրենց աշակերտների հետ պարապում-սովորեցնում էին այն ստեղծագործությունների նվագաբաժինները, որոնք կատարում էր նվագախումբը: Նվագախմբի կազմակերպման ու կայացման պատասխանատվությունն ամբողջովին դրված էր կոնսերվատորիայի տնօրենի վրա, որն էլ ամենայն բարեխղճությամբ իրականացնում էր այն: Ծուտով նվագախմբի նոտակալի առջև կանգնեց նրա պաշտոնական ղեկավար Արշակ Ադամյանը:

«Կոնսերվատորիայի տնօրենը պետք է իր վրա վերցներ նվագախմբի ստեղծման պատասխանատվությունը: Դրա համար նրան առաջին հերթին անհրաժեշտ էր ձեռքը վերցնել դիրի-

<sup>1</sup>Գ.ԱԹ, Ա. Ադամյանի ֆոնդ:

<sup>2</sup>Նույն տեղում:

ժողովական փայտիկը: Հենց դրանով էլ նա զբաղվում էր ջանադրաբար մինչև այն պահը, երբ առաջին անգամ կոնսերվատորիայի դասատուի փոխարեն, որպես դիրիժոր, փորձի եկավ նրա տնօրենը (Արշակ Ադամյան - Ն.Թ.)»<sup>1</sup>:

Նվագախմբի ստեղծման գործում կար կարևոր երկու գործոն. առաջինը՝ նրա աշխատանքային համախմբվածությունն ու անբասիր կարգապահությունը, երկրորդը՝ բարենպաստ մեծ կարեկցանքի և հորդորների այն մթնոլորտը, որը տիրում էր և կոնսերվատորիայում և նրա պատերից դուրս՝ ստեղծվող նվագախմբի գործընթացի շուրջ:

Այդ առումով առաջին հերթին պետք է նշել Ա.Սպենդիարյանի աջակցությունը: Նա այն համոզմանն էր, թե «այն նվագախումբը, որ պետք է ստեղծվի, կստեղծվի»:

1925 թվի մարտի 20-ին կայացավ Երևանի կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի երկար սպասված համերգը Արշակ Ադամյանի ղեկավարությամբ՝ պետական թատրոնի շենքում:

«...Նվագախմբի բացման արարողությունը պարզ էր, բայց նաև գուրկ չէր հանդիսավորությունից: Գեռուս դահլիճի իջեցված վարագույրի առաջ, դժվարությամբ զսպելով հուզմունքը, դուրս եկավ Սպիրիդոն Մելիքյանը, որն իր հակիրճ, բայց սրտառույ խոսքում բնութագրեց իրադարձության նշանակությունը: Հիշում եմ այդ ելույթի եզրափակիչ մասը. « և ահա այսօր մեր ժողովուրդը Սովետական իշխանության հովանու տակ առաջին անգամ հպարտորեն հնարավորություն է նվաճել իր հողի վրա, պատմական Արարատ լեռան ստորոտում լսելու սիմֆոնիկ երաժշտության մեծ արվեստը: Ինչ կարող եմ ես ավելացնել: Թող մնացածը ինքն արվեստը ասի Ձեզ»<sup>2</sup>:

Համերգին հնչեցին Մոցարտի սուլ մինոր սիմֆոնիան, Գրիգի «Նվագախմբի երկու մանրանվագը», Էկկլսի թավջութակի և նվագախմբի սոնատը, մենակատար՝ Արտեմի Այվազյան, Ռոսսինի-Էռնեստի ջութակի և նվագախմբի «Օթելլո» օպերայի թեմաներով ֆանտազիան, մենակատար՝ Հովհաննես Հովհաննիսյան և Մենդելսոնի «Հարսանեկան քայլերգը»:

Երևանի կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի անդրա-

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Նույն տեղում:

նիկ պատմական համերգի մասին «Խորհրդային Հայաստան»  
թերթում հոդվածներ են տպագրել Դերենիկ Դեմիրճյանը, երա-  
ժըշտագետ Ռուբեն Թերլեմեզյանը:

Այսպես, Արշակ Աղամյանի ջանքերով ստեղծված՝ կոմսերվա-  
տորիայի սիմֆոնիկ նվագախմբի պարապմունքները դարձան  
երաժշտանոցի ուսումնական գործընթացի անբաժանելի մասը, իսկ  
Հայաստանը ձեռք բերեց մշտապես գործող սիմֆոնիկ նվագա-  
խումբ:

Արշակ Աղամյանի աշխատանքը կոմսերվատորիայի սիմֆոնիկ  
նվագախմբի հետ տևեց մինչև 1926 թիվը:

РУБЕН  
СМБАТЯН

## К ИЗУЧЕНИЮ СКРИПИЧНЫХ ПЬЕС АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ

Вопросы изучения армянской скрипичной музыки, ее общей и частной проблематики ставят перед исследователем ряд научных задач, связанных с особенностями исполнительского и композиторского творчества, осознанием роли и значения достижений армянских музыкантов в мировом художественном процессе. Исторические условия развития разных национальных культур создали почву для взаимообогащения, взаимовлияния в процессе формирования инструментально-исполнительской, композиторской школы. Богатые музыкальные традиции армянского народа, сформировавшиеся на протяжении тысячелетий, а также постоянное стремление музыкантов к обновлению жанров, форм, средств выразительности способствовали становлению профессиональной музыкальной культуры.

Современная армянская музыка прошла большой и плодотворный путь развития, отмеченный значительными достижениями, созданием многочисленных музыкальных сочинений выдающейся художественной ценности. Общеизвестны успехи армянских композиторов, создавших произведения для скрипки в разных жанрах. Концерты, сонаты, камерно-инструментальные ансамбли, а также концертные пьесы в творчестве Н.Тиграняна, А.Спендиарова, Г.Егиазаряна, Э.Мирзояна, А.Арутюняна, Л.Сарьяна, А.Бабаджаняна, Э.Оганесяна, Э.Багдасаряна, Т.Мансуряна и многих других авторов стали неотъемлемой частью скрипичного репертуара. Многие выдающиеся скрипачи XX века — Д.Ойстрах, Л.Коган, Я.Хейфец, И.Стерн и другие исполняли произведения армянских композиторов на престижных концертных эстрадах мира. Ценный

вклад в развитие исполнительской культуры, композиторского скрипичного творчества внесли армянские скрипачи И.Налбандян, Д.Давтян, А.Габриелян, А.Ханджян, Г.Богданян, А.Шамшян, К.Костанян, А.Цицикян, А.Вартанян, З.Петросян, В.Мокацян, Г.А.Смбатян, Ж.Тер-Мергерян, Р.Агаронян, Э.Татевосян, Э.Даян, А.Мкртчян, Г.Арутюнян старший, С.Ахназарян, Г.Ц.Смбатян, В.Хачатрян, Н.Мадоян и другие.

Процесс развития армянского скрипичного искусства связан с комплексом разных сфер деятельности: не только скрипичного исполнительства, педагогики, но и создания ярких, интересных произведений, обогативших концертный репертуар.

Важное место в творчестве большинства представителей армянской композиторской школы занимают инструментальные пьесы. Интерес к этому жанру обусловлен его демократичностью, возможностью общения с широкой аудиторией.

История возникновения скрипичных пьес связана с развитием европейской, затем русской культуры. Традиции создания небольших инструментальных пьес, обработок, аранжировок и переложений вокальных и танцевальных мелодий для разных инструментов существовали давно, однако появление жанра инструментальной пьесы, так же как концерта и сольной сонаты датируются XVII-XVIII веками. Известно, что среди первых композиторов, писавших для скрипки в отмеченный период, были И.С.Бах, Г.Гендель (Германия), А.Корелли, А.Вивальди, Дж.Тартини (Италия), Гайдн, Моцарт (Австрия), Ф.Бенда, Я.Стамиц (Чехия), Ж.М.Леклер, П.Гавинье, Дж.Виотти (Франция), И.Хандошкин (Россия). Скрипичные произведения малой формы созданы в творчестве Бетховена, Шумана, Шуберта, Брамса, Сен-Санса, Бартока и других. Неоценимый вклад в развитие скрипичного искусства внесли выдающиеся виртуозы, скрипачи-композиторы Н.Паганини, А.Вьетан, П.Сарасате, Г.Венявский, Э.Изаи, Ф.Крейслер и другие, в творчестве которых большое место занимают авторские произведения: фантазии, вариации, каприсы, скерцо, пьесы или циклы пьес программного характе-

ра, а также обработки, транскрипции, переложения и т.д.

Ранний этап становления жанра скрипичных пьес в творчестве армянских композиторов связан с серединой XIX века, о чем свидетельствуют историографические источники, научные исследования армянского скрипичного исполнительского искусства в статьях и книге А.Цицикян, а затем исполнительства и истории скрипичного композиторского творчества в статьях и книгах Г.Геодакяна, А.Будагяна, Л.Матевосян, И.Золотовой.

Первоначальный этап создания пьес и обработок для скрипки в армянской музыке был связан с развитием профессионального исполнительства, так как первые пьесы появились именно в творчестве скрипачей-композиторов, чьи выступления отличались друг от друга по характеру и по направленности стиля. С одной стороны, развивались импровизационные формы народного исполнительства, опирающиеся на традиции гусанов и ашугов, связанные с интонационной средой песни, танца — во всем многообразии художественной выразительности, свойственной классическому восточному инструментализму. С другой стороны, представители нового направления на первом этапе развития, как бы продолжая традиции народного исполнительства, постепенно совмещали народный инструментализм с европейским, вначале ограничиваясь музыкой бытового типа. Это направление в их творческой практике было представлено в виде исполнения на скрипке известных в быту песен, танцев. Даже в изданных образцах этих произведений указывалось: для голоса или скрипки.

Ценный вклад в развитие армянской музыкальной культуры внесли представители трех поколений семейства скрипачей Синанянов из Константинополя, в творчестве которых были аккумулярованы, сформированы и самобытно выражены художественные тенденции своего времени. Деятельность наиболее талантливого константинопольского скрипача Арутюна Синаняна — эрудированного музыканта, дирижера, также пианиста и композитора была обширной и плодотворной. Наряду с сольными выступлениями он был дирижером симфонического

оркестра. Профессиональный коллектив, в состав которого входили исключительно армянские музыканты, получил широкую известность на Ближнем Востоке как "Оркестр Синаняна" или "Армянский оркестр". Его концертные программы включали произведения Моцарта, Бетховена, Гуно, Верди, Беллини, Россини, Чухаджяна, Синаняна.

